

Խմբագրական

ՄԵՐ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍՕՐ



Ցեղասպանութենէն աւելի քան հարիւր տարի ետք, նոյն աշխարհն է ուր կ'ապրինք....Ո՛չ մէկ իրաւունքի ուժ, այլ միայն՝ ուժին իրաւունքը, ո՛չ մէկ արդարութիւն, այլ նոյն խարդաւանքները, նոյն շահամոլութիւնները, նոյն անտառի օրէնքը՝ աւելի սրբացած, աւելի հմտացած, աւելի կատարելագործուած դրուածքով....Եւ նոյն առասպելները՝ մարդկային իրաւունքի, ժողովրդավարութեան, արդարադատութեան....ազատութեան առաւել մեծ տարողութեամբ չարաշահումները, այլանդակութիւնները....Անպատիժ մնացած Ցեղասպանութիւնը ծնաւ նորանոր ցեղասպանութիւններ քիչ մը ամէն տեղ, ընդհուպ մինչեւ Տէր Զօր, Հալէպ, Զեսապ.... իսկ

ցեղասպանը դարձաւ աւելի լկտի ու լիռ, դիմակ փոխեց երբեմն, բայց դոյզն ինչ չմարդացաւ....

Իսկ մենք....

Մեծ եղեռնէն ահա աւելի քան հարիւր տարի ետք, հայրենասիւնուած կամ հայրենագրկուած Արեւմտահայութիւնը ներկայացնող բեկորները շփոթահար վիճակի մէջ են ընդհանրապէս....դեռեւս Արեւմտահայաստանի Էապէս հողային քաղաքական-իրաւական Դատը նոյնացնելով Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումներուն հետ՝ այս կամ այն պետութեան թէ միջազգային կառոյցին կողմէ, կամ անոր ժխտումը քրեականօրէն պատժելի դարձնելու օրինագիծներու որդեգրումին հետ..., «ներողութիւն խնդրելու» պահանջին հետ, դրամական հատուցումի պահանջին հետ...Եւ այսպէս շարունակաբար:

Տակաւին, հայ քաղաքական միտքը կը մնայ բանտարկուած, մասնաւորաբար՝ ուրիշներէն ճանաչում կամ դատապարտում մուրալու, Էապէս զգացական, պղատոնական եւ ապաքաղաքական ոլորտին մէջ...

Տակաւին, տարագիր արեւմտահայութեան աշխարհացրիւ եւ բազմահպատակ բեկորները չեն ցուցաբերած այն հաւաքական կամքն ու յանձնառութիւնը կազմակերպուելու մէկ ներկայացուցչական ընտրովի կառոյցի մը ներքոյ, որ բխած ըլլայ Համասփիւռքեան Համաժողովէ մը:



Տակաւին, Յեղասպանութենէն եւ հայրենագրկումէն աւելի քան հարիւր տարի ետք, չենք կրցած Էապէս (ոչ՝ ձեւականօրէն) վերջ տալ մեր դարաւոր անմիաբանութեան, հատուծականութեան եւ կեդրոնախոյս մենատիրութեան ախտագին ձգտումներուն...նոյնիսկ երբ հարցը կը վերաբերի ազգային մեր մեծագոյն հարցին շուրջ միաւորութիւն պատմական անհրաժեշտութեան ու հրամայականին:

Տակաւին, հայ քաղաքական միտքը յստակօրէն չէ բանաձեւած, որ պահանջուածը՝ Հողն Է, հայուն հողը՝ Արեւմտահայաստանը, հազարամեակներու մեր բնօրրանը, ուր ծնունդ եւ սնունդ առած, ծաղկած ու բարգաւաճած Է հայ մշակոյթն ու քաղաքակրթութիւնը դարեր շարունակ...

Տակաւին, յստակ չէ մեր մտքին մէջ, որ մեր հողային դատին հանգամանաւոր եւ իրաւական պահանջատերը Տարագիր Արեւմտահայութիւնն Է, իր բնօրրանէն բռնի աքսորուած հայութիւնը:

Տակաւին, դեռ յստակ չէ մեր մտքին մէջ, թէ հաւաքական իրաւունքի մը լիիրաւ հետապնդումը կարելի Է կատարել միմիայն կեդրոնական լիազօր եւ լիիրաւ մարմնի մը միջոցով, որպէսզի անոր ձայնը լսելի ըլլայ իրաւապէս: Այսինքն, հրամայական անհրաժեշտութիւն կը դառնայ կեանքի կոչել՝ ընտրովի կայացած, հայրենագրկեալ արեւմտահայութիւնը ներկայացնող ու կառավարող կառոյց, որպէսզի ան ճանաչուժ ստանայ բոլորին կողմէ եւ մասնաւորապէս՝ Միջազգային Հանրային Իրաւունքին կողմէ:

Շատեր կրնան առարկել որ Հայաստանի Հանրապետութիւնը ի՛նք պահանջէ այն հողային իրաւունքները, որոնք սահմանուած են յատկապէս Ուիլսոնեան իրաւարար վճիռով, հրապարակուած 22 Նոյեմբեր 1920 թուականին, որ ի դէպ կը մնայ իրաւականօրէն եւ անժամանցելիօրէն գործադրելի, անջատաբար Սելրէն: Ճիշդ Է որ սա լաւագոյն տարբերակը պիտի ըլլար: Բայց դարձեալ այն պարագային, որ Արեւելահայաստանի իշխանութիւնները պահանջեն գործադրութիւնը Ուիլսոնեան իրաւարար վճիռին, եւ Թուրքիա առարկելու ըլլայ, որ այդ հողամասերը կը գտնուին Արեւմտահայաստանի մէջ, վերոնշեալ Կեդրոնական Ներկայացուցչական Կառոյցն Է որ՝ երբ կազմուի, կրնայ պահանջել այդ հողամասերու ազատագրումը եւ փոխանցումը Արեւելահայաստանին:

Յարդ, հայրենահանուած Արեւմտահայութիւնը եւ Արեւմտահայաստանը ոչ մէկ ճանաչում ունին, քանզի մեզի պակսած են հաւաքական կամքը կազմակերպուելու մէկ հաւաքական, ներկայացուցչական, ընտրովի կայացած կեդրոնական կառոյցի մը մէջ: Հարց կը ծագի, թէ արդե՞ժ տարագիր արեւմտահայութեան նորանոր սերունդները՝ հետզհետէ, ժամանակի թաւալումով, մոռացութեան պիտի տան որ իրենք իրաւայաջորդն են իրաւագրկուած ժողովուրդի մը եւ լիիրաւ տէրը՝ իրենց վերապահուած իրաւունքի մը:



Կարելորութեամբ դեռ պիտի նշել, որ նման կազմակերպուած եւ իրաւաքաղաքական կառոյց մը անփոխարինելի գէնք մը պիտի ըլլար թուրք-ատրպէյճանական միացեալ թշնամի ճակատին դէմ ալ, որպէս քարոզչական եւ դիւանագիտական լծակ եւ այլապէս... եւ ազդու զօրակցութիւն պիտի հայթայթէր Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն:

Այսօր առաւել քան երբեք, պատմական անհրաժեշտութիւն է դուրս ելլել նեղ-հատուածական, խմբակային կամ այլ մասնատուածութենէ, մտածել ու գործել համահայկական գաղափարականով, համահայկական տեսլականով, համահայկական մտածողութեամբ եւ կեանքի կոչել վերոնշեալ մէկ, ներկայացուցչական մարմինը:

Նման կեդրոնական, ներկայացուցչական միակ լիազօր մարմինը ստեղծելով, ի՛նչ անուն ալ տանք անոր, մենք վերջապէս վերջ դրած կ'ըլլանք մեր քաղաքական-իրաւական տհասութեան, ուրիշներուն ապաւինելու ստրկամտութեան, լիիրաւ տէրը կը դառնանք մեր իրաւունքին եւ պահանջատիրութեան:

Նմանապէս, նման մարմնի մը առկայութիւնը՝ համահայկական ոգիով ու գաղափարականով ամրապնդուած, նոր աւիշ ու կենսունակութիւն կու տայ, վստահաբար, Հայ Սփիւռքին, շօշափելի նպատակ մը նաեւ հայապահպանութեան մեր ճիգերուն: Աւելին, ան կրնայ փոխ-արդիւնաւետ եւ հեզասահ դարձնել Սփիւռք-Հայաստան կապերը, ինչ որ զօրութեան աղբիւր կը դառնայ Հայաստանի, Արցախի եւ Տարագիր հայութեան, այսինքն՝ համայն հայութեան:

Եթէ մենք անկեղծ ենք մեր պահանջատիրական պայքարին յանձնառութեան մէջ, սին խօսքերէն, լոգունգներէն եւ շրթունքի մարզանքներէն գերիվեր, մենք անհրաժեշտաբար պիտի դուրս գանք այս ամուլ, անգործունեայ եւ կեդրոնախոյս վիճակէն եւ՝ համահայկական գաղափարականով ամրապինդ, պիտի կարենանք ստեղծել տարագիր արեւմտահայութիւնը լիիրաւ ներկայացնող կեդրոնական, լիազօր եւ ընտրովի կայացած կառոյցը, միաժամանակ նոր թափ ու աւիւն ներշնչելով հայապահպանումի մեր աշխատանքներուն եւ Սփիւռք-Հայաստան փոխյարաբերութեանց արդիւնաւորումին....

Սա նաեւ համայն հայութեան հզօրացման Էական խթան կը հանդիսանայ՝ Հայաստան, Արցախ, Սփիւռք, ազգային ռազմավարական ծրագրի մշակումով եւ գիրար լրացնող աշխատանքներու յստակ բաժանումով....Հզօրացում՝ որ գերագոյն երաշխիքն է հայ դատի պահանջատիրութեան բարօք լուծումին, կուռ կազմակերպուած ամբողջականութեամբ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

Ս ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՆԻԿՈՍԻՈՅ ՍԷՋ



Ս. Յարութեան Տօնին առիթով, Կիրակի 16 Ապրիլ 2017-ին, Ս. Եւ անմահ Պատարագ մատուցեց եւ օրուան խորհուրդին մասին քարոզեց Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Խորէն Արքեպիսկոպոս Տողրամաճեան՝ Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ խնկաբոյր կամարներուն տակ, հայ հաւատացեալ հանրութեան հոծ բազմութեան մը ներկայութեան:

Իր բովանդակալից քարոզին մէջ, Սրբազան Զայրը յատկապէս շեշտեց որ Զրիստոսի հրաշափառ Յարութիւնը Էապէս յաղթանակն է կեանքին մահուան դէմ...աւելցնելով որ անկաւաւտիս է հոգեւոր Նոր ծնունդի, Նոր կեանքի, քանզի մեզմէ

իւրաքանչիւրը աշխարհ կու գայ Աստուծոյ կամքով առաքելութիւն մը ի կատար ածելու համար, տառապելու, չարչարուելու անընկճելի ոգիով եւ շունչով, հաւատքով, մարդավայել վարքով...պատրաստուելու եւ արժանի դառնալու համար ճշմարիտ յաւիտենական կեանքին: Ան նշեց որ Ս. Յարութիւնը մենք կ'ապրինք ամէն օր, ամէնօրեայ ներկայութեամբ, ինչպէս մեր եկեղեցիներու ճակատներուն վրայ դրոշմուած «Է» տառը...Իսկ մեր ժողովուրդը իր ողջ պատմութեամբ յարութեան սիրալի խորհուրդը ունի, մահէն, Գողգոթայէն դէպի կեանք գացող, Վարդանանց օրերէն...«Վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց»...մինչեւ հիմա: Ան յատկապէս յիշատակեց Ապրիլեան քառօրեայ պատերազմին մեր քաջարի մարտիկներուն պաշտպանութիւնը հայրենեաց սուրբ հողին, երբ ազերին անակնկան կերպով կը յարձակէր Թալիշի վրայ, գազանաբար սպաննելով, բռնաբարելով, գլխատելով, անարգելով ծեր ու երեխայ... ինչպէս Նաեւ՝ Ապրիլեան Եղեռնի հայուն Գողգոթան, զոր հայը յաղթահարեց յաղթական Սարդարապատով...:

Զիմա ալ, ըսաւ Սրբազան Զայրը, Ս. Յարութիւնը մեզի կը պատգամէ իրարու աչքին Նայիլ եղբայրաբար, հայկականութեամբ տոգորուն, քրիստոնէական ոգիով եւ գոչել՝ «Զրիստոս յարեաւ ի մեռելոց, Օրինեալ է Յարութիւնն Զրիստոսի»: Ան աւելցուց որ իւրաքանչիւր հայ, իւրաքանչիւր ազգային գործիչ՝ աշխարհական թէ եկեղեցական, պարտի պարտականութեան գիտակցութեամբ, իր արմատներուն վերադարձով, ազգային շունչով եւ ոգիով մօտենալ իր պաշտօնին՝ ազգային եկեղեցական կեանքէն ներս, կրթական-ընտանեկան յարկերուն տակ, որպէսզի իմաստ ունենայ Ս. Յարութեան տօնը եւ ձգտիլ լաւէն լաւագոյնին ու դեռ աւելին:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՐԶ. Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔ. ՏՈՂՐԱՄԱՃԵԱՆԸ ՆՇԱՆԱԿԵՑ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ



Կ'ուզենք ուրախութեամբ յայտնել, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Գերշ. Տ. Խորեն Արք. Տողրամաճեանը նշանակեց Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ:

Խորեն Սրբազանը արեղայ ձեռնադրուած է 1984-ին, իսկ վարդապետ 1988-ին, պաշտօնակալելով «Բարգէն Կաթողիկոս Կիլիկիոյ երեք տարբեր Ազգային Վարժարաններու մէջ վարած է

1998-ին ձեռնադրուած է Ծայրագոյն Վարդապետ:

1984-1995, յաջորդաբար ստանձնած է հետեւեալ պաշտօնները.- Դպրեվանքի Հսկիչ եւ Փոխ-Տեսուչ, գաւազանակիր, Դպրեվանքի եւ հայկական երեք տարբեր Ազգային Վարժարաններու մէջ վարած է

ուսուցչական պաշտօններ: Չուզահեռ, ստանձնած է տարբեր առաքելութիւններ, մասնակցելով ազգային, կրօնական եւ միջեկեղեցական համաժողովներու:

1990-1992 հետեւած է Լիբանանի Քաւիքի «Սուրբ Հոգի» համալսարանի Նոր Կտակարանի, Եկեղեցւոյ Պատմութեան եւ Ծիսագիտութեան դասընթացներուն:

1995-2004 տարիներուն եղած է հոգեւոր հովիւ Թեսաղոնիկէի Հայոց:

1999-2003 յաճախած է Յունաստանի ամերիկեան համալսարան եւ հետեւած Պատմութիւն եւ Միջազգային Յարաբերութիւններ մասնագիտութեան: Ստացած է B.A. բարձրագոյն ուսման վկայական:

2004-2017 տարիներուն վարած է Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդութիւնը: Խորեն սրբազանը արդէն ժամանած է Կիպրոս եւ ստանձնած իր նոր առաքելութիւնը:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

12 Ապրիլ, 2017

ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ ԿԱՆՉՈՒՈՐԸ



Կանչուորը հայկական հին եկեղեցի մըն է, որ կը գտնուի՝ այժմ բռնագրաւեալ Ֆամակուսթա քաղաքի հիւսիս-արեւմտեան կողմը: Բերդանման շինութիւնը կառուցուած է 1346-ին, Կիլիկիայէն Կիպրոս ներգաղթած հայ գաղթականներու կողմէ: Կառուցուած է հայկական ճարտարապետութեան ինքնատիպ ոճով, բայց կիպրական որմնադրութեան ոճով: Անիկա մաս կազմած է վանական մշակութային կարեւոր կեդրոնի մը, ուր կ'ըսուի որ ուսանած է Սուրբ Ներսէս Լամբրոնացին:



1571 թուականէն ան մնացած է չօգտագործուած կառոյց մը, սակայն պահպանուած է 1907-ին, Կիպրոսի՝ Չնութիւններու պահպանման մարմին կողմէ: 1936-ին, կառոյցը վարձու տրուած է Ֆամակուսթայի հայկական համայնքին 99 տարուան վարձակալութեան ժամանակահատուածի մը համար: 1937-1944 թուականներուն ընթացող Նորոգութեանց աշխատանքներէն ետք, առաջին Պատարագը մատուցուած է 14 Փետրուար 1945-ին Գրիգոր Պահլաւունի Արքեպիսկոպոսի կողմէ: Կանչուորը մասամբ

հրկիզման ենթարկուած է կիպրացի թուրք զինեալներու ձեռամբ 1957 թուականի Մարտ ամսուան մէջ: Նորոգութեան ենթարկուելէ ետք, օգտագործուած է որպէս եկեղեցի մինչեւ 1962 թուականը: 1963-1964 թուականներուն, երբ տեղի ունեցան միջ-համայնքային բռնութիւնները, անիկա գրաւուած է կիպրացի թուրքերուն կողմէ, ապա՝ թրքական զինուժին կողմէ, Օգոստոս 1974-ին, դառնալով Կիպրոսի բռնագրաւեալ տարածքին մաս: 2003-ին, Նոյնիսկ երբ ազատ տեղափոխութեան սեղմումները, որոնք դրուած էին բռնագրաւող վարչակարգին կողմէ, մասամբ վերցուեցան՝ Կանչուորը մնաց դեռեւս անմատչելի, քանզի ան կը գտնուէր «ռազմական գօտի»ին մէջ: Ներկայիս, ան մատչելի դարձած է, 2005 թուականի վերջերէն սկսեալ :

Հարցազրոյց

Հարցազրոյց Թաներ Աքչամի «Հայերու բռնի իսլամացումը» գրքի թարգմանիչ թրքագէտ Մելինէ Անումեանի հետ



Հարցազրոյց թրքագէտ, պատմական գիտութիւններու թեկնածու Մելինէ Անումեանի հետ

– Թուրք պատմաբան Թաներ Աքչամի «Հայերու բռնի իսլամացումը. լուրջին, ժխտում եւ ուժացում» գրքի թարգմանութիւնը կարեւոր իրադարձութիւն էր, որ նոր լոյս կը սփռէ 1915-ի Հայոց ցեղասպանութեան պատմագիտական ուսումնասիրութիւններու ծիրէն ներս: Որո՞նք են գլխաւոր այս հարցին հետ աղերս ունեցող այն նոր բացայայտումները, զորս դուք կը հաստատէք, եւ որոնք

ցարդ չէին հրապարակուած:

– Յայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամի այս գիրքը մինչ այժմ կատարուած ցեղասպանագիտական ուսումնասիրութիւններից առանձնանում է յատկապէս հետեւեալ առումներով: Նախ՝ սոյն աշխատութիւնը յագեցած է բազմաթիւ օսմանեան փաստաթղթերով, մասնաւորապէս՝ հեռագրերով, որ հիմնականում Ներքին գործերի նախարարութիւնից ուղղուել են Օսմանեան կայսրութեան բազմաթիւ շրջաններ: Այդ բոլոր վաւերագրերը գիտական շրջանառութեան մէջ են դրուում առաջին անգամ: Բացի այդ, Թաներ Աքչամի այս աշխատութիւնը մանրամասն քննում է Հայոց ցեղասպանութեան անքակտելի տարրերից մէկը եղած բռնի իսլամացումը: Նա, հիմնուելով բացառապէս օսմանեան փաստաթղթերի վրայ, մանրամասն ներկայացնում է Մեծ եղեռնի ժամանակ հայերի բռնի ուժացման քաղաքականութեան ամբողջական գործընթացը, ցոյց տալիս, որ Հայոց ցեղասպանութեան ժամանակ տեղահանութեան եւ կոտորածների ընթացքում կիրառուած բռնի կրօնափոխութիւնը կատարուել է ոչ թէ պատահական կամ կամայական ձեւով, այլ՝ լիովին ուղղորդուել ու վերահսկուել է կենտրոնական կառավարութեան եւ, մասնաւորապէս, ներքին գործերի նախարար Թալէաթ փաշայի կողմից: Ինչպէս գրքում նշում է հեղինակը, Հայոց ցեղասպանութեան ընթացքում բռնի ուժացումն իրականացուել է 3 տարբեր ձեւերով. «Առաջինը «կամաւոր» եւ/կամ հարկադիր կրօնափոխութիւնն է: Բռնի ուժացման քաղաքականութեան երկրորդ կարեւոր հենքը 12 տարեկանից ցածր տղայ եւ աղջիկ երեխաների հանդէպ գործադրուածն է, երբ մանուկները հարկադիր կերպով մուսուլման են դարձել, ցրուել որբանոցներում եւ մահմետականների տներում, որտեղ դաստիարակուել են՝ թուրք-իսլամական մշակոյթին համապատասխան: Ասիմիլացիայի երրորդ հենքը եղել է մանկամարդ աղջիկների բռնի ամուսնացումը մահմետական տղամարդկանց հետ: Այս բոլոր հարցերի շուրջ կենտրոնից անընդհատ հրամաններ են յղուել շրջաններ»:

– Այս ընթացքով, կարելի է հաստատել, որ բռնի իսլամացումը ցեղասպանութեան շարունակութիւնն է:



– Միանշանակ: Թաներ Աքչամն այս գրքում արձանագրում է, որ բռնի իսլամացումը, յատկապես Հայոց ցեղասպանութեան համատեքստում, եղել է ոչ միայն Ցեղասպանութեան շարունակութիւնը, այլ նաեւ՝ Մեծ եղեռնի էական եւ անքակտելի տարրերից մէկը: Ի դէպ, այս հանգամանքը, Թաներ Աքչամի աշխատութիւնից բացի, շեշտուել է նաեւ հայ թուրքագետներ Ռուբէն Մելքոնեանի եւ Միեր Աբրահամեանի կողմից՝ նրանց համատեղ գրքում, որի վերնագիրն է՝ «Օսմանեան կայսրութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան բռնի իսլամացման քաղաքականութիւնը հայերի նկատմամբ, որպէս ցեղասպանական արարք»:

Ինչպէս նշում է Աքչամը, այնպիսի թիւր պատկերացում կայ, թէ իբր ցեղասպանութիւնն իրականացում է միայն ֆիզիքական բնաջնջման միջոցով: Միևնուրեւ իրականում, ցեղասպանութիւնը մի որեւէ եթնիք խմբի մասնակի կամ ամբողջական ոչնչացումն է: Եւ բացարձակապէս պարտադիր չէ, որ այդ ոչնչացումը կատարուի ֆիզիքական բնաջնջման ճանապարհով: Ի դէպ, դա շեշտել է նաեւ ճենոսայտ (ցեղասպանութիւն) եզրոյթը շրջանառութեան մէջ դրած Ռաֆայէլ Լեմբինը, համաձայն որի՝ ցեղասպանութիւն նշանակում է մի խմբի բնաջնջմանն ուղղուած ֆիզիքական, կենսաբանական եւ մշակութային ոչնչացման տեխնիկաների կիրառում: Մշակութային ցեղասպանութիւնը կարող է նախաքայլ համարուել ֆիզիքական բնաջնջումից առաջ: Բռնի ուժացումը մշակութային ցեղասպանութեան տարրերից մէկն է, քանի որ մշակութային ցեղասպանութիւնն ընդգրկում է նաեւ տուեալ խմբի կրօնական ու կրթական հաստատութիւնների, եւ, ընդհանրապէս, ամբողջ մշակութային ժառանգութեան ոչնչացումը:

Աքչամն իր այս ուսումնասիրութեան մէջ ընդգծում է նաեւ, որ պէտք է միմեանցից տարբերակել բնական եւ բռնի ուժացումները, որովհետեւ բնական ասիմիլիացիան կարող է լինել երկարատեւ գործընթացի բնական հետեւանք, իսկ բռնի ուժացումը կատարւում է կարճ ժամանակահատուածում եւ միտումնաւոր կերպով:

Հեղինակը շեշտում է, որ մինչ այժմ Հայոց ցեղասպանութեան հարցն ուսումնասիրած գիտնականներն առաւելապէս կենտրոնացել են ֆիզիքական բնաջնջման վրայ, քանի որ ցեղասպանագիտութեան մէջ ընդհանրապէս ընդունուած է եղել ցեղասպանութեան դասական օրինակ համարել Հոլոքոստը, որի ժամանակ բռնի ուժացում գրեթէ չի գործադրուել: Այնինչ, ինչպէս ընդգծում է ցեղասպանագետը, անգամ Լեմբինն է շեշտել ցեղասպանութեան գլխաւոր տարրերից մէկի՝ բռնի ասիմիլիացիայի մասին: Այսպիսով, Աքչամը հայերի բռնի իսլամացումը եւ ուժացումը դիտում է որպէս Հայոց ցեղասպանութեան կառուցուածքային մի տարր՝ միաժամանակ ընդգծելով որ Մեծ եղեռնն իրագործուել է նաեւ ֆիզիքական զանգուածային բնաջնջման միջոցով:

Աքչամը սոյն գրքում յատուկ անդրադառնում է նաեւ հայ երեխաների՝ թուրք-իսլամական մշակոյթի համաձայն մահմետականների ընտանիքներում դաստիարակուելու եւ հայ կանանց ու աղջիկների առեւանգումների բազմաթիւ դէպքերին՝ դրանք համարելով հայ ծիսի ոչնչացմանն ուղղուած միջոցներ:

– Ի՞նչ ներդրում կրնայ ունենալ այս գիրքը Հայ Դատի հարցով տարուող աշխատանքներուն:

– Նախ այս գիրքը կարելուում է գիտական առումով, քանի որ Հայոց ցեղասպանութեան ժամանակ կատարուած բռնի կրօնափոխութեան դէպքերն առաջին անգամ քննւում են



ամբողջական գործընթացի համատեքստում, եւ հեղինակը յանգում է այն եզրակացութեան, թէ Օսմանեան կայսրութեան կենտրոնական կառավարութիւնը ոչ միայն ուղղորդել ու վերահսկել է այդ գործընթացը, այլ նաեւ, հարկ եղած դէպքերում, միջամտել է դրանց՝ ժամանակ առ ժամանակ թոյլ չտալով, որ հայերը կարողանան այդ կերպ «փրկուել» կոտորածից:

Հեղինակն ինքն էլ շեշտում է, որ կրօնափոխութեան շնորհիւ իրենց նախկին բնակավայրերում մնալ կարողացած այդ հայերի «փրկութիւնն» էլ զուտ ֆիզիքական բնոյթ էր կրում, քանի որ վերացւում էր հայի տեսակը...

Այս ուսումնասիրութիւնը շատ էական ներդրում է ցեղասպանագիտութեան մեջ, քանի որ սոյն գրքով վերջնականապէս կանխւում են կրօնափոխ հայերին որպէս փրկուած ներկայացնել ձգտող որոշակի թուրք շրջանակների փորձերը: Դա շատ էական է Հայ դատի ուղղութեամբ տարուող աշխատանքների առումով:

ՀԱՐՑԱԶՈՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ ՎԱՅԱԳՆ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Յօդուածներ

ՆԱՄԱԿ ԵՐԿՐԷՆ- 24 Ժամը Բաւարար ՉԷ՝

Բաֆֆի Տուտազլեան



Մարտի սկիզբը, քաղաքական կեանքի առանցքը կազմող ընտրապայքարներն ու քարոզարշաւները մեծ դժուարութեամբ անտեսելով՝ որոշեցի հերթական այցելութեամբ Արցախ մեկնիլ, «Թուֆէնքեան» հիմնադրամի գործընկերներուն հետ Զաշաթաղի շրջան երթալու եւ գարնան հետ սկսող աշխատանքներուն հետեւելու համար: Ինչպէս արդէն գրած էի նախորդ նամակներուն մէջ, առաջին այցելութիւնը կատարեցինք Իշխանաձոր գիւղը, ապա՝ Միջնաւան, յետոյ ճամբայ ելանք դէպի Կովսական, որ ազատագրուելէ առաջ ծանօթ էր թրքական Չանգելան անունով: Կովսականը շուրջ 925 բնակիչ (232 ընտանիք) ունեցող համայնք մըն է, որուն կազմին մէջ կը մտնեն Նաեւ Դիցմայրի եւ Քարատակ գիւղակները: Դպրոցը ունի աւելի քան 150 աշակերտ, իսկ մանկապարտէզը՝ 40:

Կովսական տեղափոխուած են Նաեւ 10 սուրիահայ ընտանիքներ, որոնք բոլորն ալ հողագործութեամբ կը զբաղին: Բացառութիւն են Մուշեղն ու իր կինը, որոնք բժիշկներ են եւ կ'աշխատին տեղւոյն փոքր հիւանդանոցին մէջ: Շուրջ 5 տարի առաջ, Կովսականի մէջ «Թուֆէնքեան» հիմնադրամը նորոգած էր 12 բնակարաններ, որոնցմէ 7ն յանձնուած էր Գամիշլիէն տեղափոխուած սուրիահայ ընտանիքներու: Իշխանաձոր եւ Միջնաւան այցելած էինք, գլխաւորաբար շինարարական եւ գիւղատնտեսական աշխատանքներու ընթացքին ծանօթանալու եւ համապատասխան ցուցմունքներ տալու համար: Իսկ Կովսական որոշեցինք այցելել՝ իմ պնդումով եւ ամբողջովին այլ նպատակով... Կուզէի ծանօթանալ Արցախի ազատագրուած տարածքներուն վրայ տեղաւորուած սուրիահայ ընտանիքներուն եւ անոնց աշխատանքներուն:

Գործընկերս՝ Էդիկը, որ Արցախի մեր գրասենեակի պատասխանատուն է, առաջարկեց այցելել Կարապետ Յազրոյին, զոր բոլորը կը ճանչնան «Կարօ» անունով: Կարօն 5 տարի առաջ մերժած էր իր ընտանիքի միւս անդամներուն հետ Շուէտ արտագաղթելու հնարաւորութիւնը եւ որոշած էր տեղափոխուիլ Արցախ ու շարունակել իր սիրելի աշխատանքը՝ հողագործութիւնը: Կարոյին հանդիպեցանք իր առանձնատան դիմաց: Յերկող մեքենաներու մաքրութեամբ զբաղած էր ան, եւ երբ մեզ տեսաւ, թողեց ամէն ինչ ու առաջարկեց սուրճ հիւրասիրել: Երբ հետաքրքրուեցայ իրմով, Կարօն պատմեց, թէ տարիներ առաջ, երբ որոշած էր Արցախ տեղափոխուիլ, ոչինչ ուներ, ամէն ինչ թողած էր ետին եւ ընտանիքի միւս անդամներուն հետ Շուէտ արտագաղթելու առիթը անտեսելով՝ դիմած էր Արցախի իշխանութիւններուն, Կովսականի մէջ բնակարան ստանալու համար:



«Գրպանս դրամ չկար, տո՛ւն ալ չունէի: Ինծի ըսին, որ 6 ամիս ետք բնակարանս պատրաստ կ'ըլլայ: Վեց ամիս օթոյիս մէջ ապրեցայ, նոյնիսկ ձմրան ամենացուրտ օրերուն: Սիրած էի Կովսականը, լա՛ւ հող ունի, գարի, ցորեն, կորեկ ցանելու համար շա՛տ լաւ է: Բնակարան ստացայ ու միաժամանակ սկսայ ցանելու: Վարկ ստացայ ու գործս քիչ-քիչ մեծցուցի: Մինչ այդ, Շուէտէն միշտ կ'ըսէին, որ ես խե՛նթ եմ, տրամաբանութիւն չունիմ, պետք է թողեմ ամէն ինչ ու իրենց ետեւէն երթամ: Ականջ չկախեցի, գործի՛ս ետեւէն էի», պատմեց Կարօն՝ յիշելով իր առաջին դժուար տարիները, ապա անմիջապէս անցաւ ներկային:

«Յիմա, հազար հեկտարի վրայ գարի կը ցանեմ ու կը ծախեմ անասուն պահող ընկերութիւններու: Տունս մեծցուցի, նոր մեքենաներ եւ «ճիբ» գնեցի: Գործս լաւ է, աշխատանք կա՛յ: Երբեմն Շուէտէն կը գանգեն ու կը բողոքեն կեանքի դժուարութիւններուն մասին, անմիջապէս կ'ըսեմ, որ չմտահոգուին, եւ իրենց ալ օգնութիւն կը դրկեմ... կը զարմանան, բայց հիմա ի՞նչ կրնան ընել այլեւս», շարունակեց ան: «Այս անծայրածիր հողերը կը տեսնե՞ք, այս հողերը ամբողջութեամբ կարելի է կանաչ դարձնել, ցանել ու հնձել: Այնքա՛ն շատ գործ կայ, որ օրական 24 ժամը արդէն հերիք չէ, չի՛ բաւեր: Ափսո՛ս, որ հարազատներս Շուէտը նախընտրեցին: Միասին այս տարածքները կրնայինք ծաղկեցնել», ըսաւ Կարօ:

Սուրճը խմեցինք ու ցտեսութիւն ըսինք Կարոյին: Վերադարձի ճամբան երկար էր, ու ամբողջ տեւողութեան ականջիս կը հնչէր Կարոյի ափսոսանքով ու յոյսով լեցուն խօսքերը՝ «Այնքա՛ն շատ գործ կայ, որ օրական 24 ժամը արդէն հերիք չէ, չի՛ բաւեր: Ափսո՛ս, որ հարազատներս Շուէտը նախընտրեցին...»:

Գրեցե՛ք ինծի:

rafdoud@aol.com

Հայոց ցեղասպանութենէն ետք Սուրիոյ մէջ հայ կիներն ու մանուկները փրկած Ռուբէն Հերեանի պատմութիւնը



Համաշխարհային Ա. պատերազմի աւարտին, բազմաթիւ հայկական եւ միջազգային կազմակերպութիւններ, օտարերկրեայ առաքելութիւններ, ինչպէս նաեւ անհատներ փորձեցին գտնել Ցեղասպանութենէն վերապրածներ, զանոնք փրկել գերութենէ եւ վերականգնել անոնց հայկական ինքնութիւնը:

Այս յօդուածին նպատակն է լոյս ընծայել Համաշխարհային Ա. պատերազմէն ետք ազատագրումի առաքելութեան կարեւորութեան վրայ, հիմնականին մէջ կեդրոնանալով պատերազմէն ետք բազմաթիւ հայ կիներ ու որբեր փրկած ականաւոր գործիչ Ռուբէն Հերեանի կեանքին ու գործունեութեան վրայ:

Հետազօտման գլխաւոր աղբիւրը Հերեանի անձնական արխիւն է, որ կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան Ազգային արխիւներուն մէջ: Հարիւրաւոր անձնական եւ պաշտօնական նամակներ, դիմումներ, փաստաթուղթեր, լուսանկարներ եւ անուններու ցանկեր որբերու (որոնց փնտռած է եւ փրկած) կը բացայայտեն Հերեանի դժուար ու բարդ գործունեութեան պատմութիւնը: Իր առաքելութեան ընթացքին, Հերեան մնայուն հասցէ մը չունէր: Ան իր ժամանակաւոր հասցէներուն մասին տեղեակ կը պահէր հայկական օրաթերթերու, եկեղեցւոյ կամ ազգականներու միջոցաւ: Արխիւային բազմաթիւ փաստաթուղթերուն կողքին կան դիմումագիրներ, որոնք հիմնական մէկ խնդրանք ունին՝ գտնել ու փրկել ազգական մը, մայր մը, դուստր մը, քոյր մը, զաւակ մը եւ այլն: Դիմումագիրները գրուած են Արեւմտեան Հայաստանի շրջաններու բարբառներով, երբեմն նամակները հայատառ թրքերէն են, երբեմն ալ արաբերէն: Նամակները յաճախ թուղթի փոքր կտորներու կամ բացիկներու ձեւով են, եւ անոնց վրայ մատիտով նշուած են Հայոց ցեղասպանութենէն վերապրողներուն ցաւալի ճակատագիրները:

Հերեան ծնած էր 1869-ին, Թոքաթ (Էւսոքլա): 1883-ին, Թոքաթի Ազգային Ժառանգաւորաց վարժարանը աւարտելէ ետք կը փոխադրուի Պոլիս, ապա Նիւ Եորք, ուր կը ձեռնարկէ իր սեփական գործին: Պոլիս բնակութեան ընթացքին Հերեան անդամ էր Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան, ան յետագային անդամ դարձաւ Ռամկավար Ազատական կուսակցութեան: Նիւ Եորքի մէջ ան աջակցեցաւ Նոյն կուսակցութեան, մասնակից էր ազգային հարցերու լուծման եւ հիմնադիրներէն մէկը եղաւ Կրթասիրաց միութեան:

1914-ին, երբ Համաշխարհային Ա. պատերազմը սկսաւ, Հերեան արդէն իր գործին մէջ բաւական յաջողութիւն ձեռք բերած էր եւ ամերիկահայերու մօտ լաւ վարկի տէր էր: Հայոց ցեղասպանութեան մասին իմանալէ անմիջապէս ետք, ան ամէն բան ձգեց իր ետին եւ, հայ կամաւորներու հետ փոխադրուեցաւ Մերձաւոր Արեւելք, ուր մաս կազմեց Հայկական լեգէոնին: 1918-ի ամբան, երբ Հայկական լեգէոնի կամաւորները փոխադրուեցան Պաղեստին՝ պատերազմի ճակատ, Հերեան իր տարիքին պատճառով չուղարկուեցաւ: Ան



Գահիրէի մօտ հիւանդանոցի մը պահակ նշանակուեցաւ: Թէեւ Յերեան վիրաւոր հայ կամաւորներն ու ֆրանսացի զինուորները հոգաց, իր նամակներէն մեկնելով կը թուի, թէ կը փափաքէր աւելի երիտասարդ ըլլալ՝ մաս կազմելու համար լեգէոնականներուն՝ փրկելու համար իր ժողովուրդն ու հայրենիքը: Այդ էր հիմնական պատճառը անոր ամենէն նուիրեալ դէմքերէն մէկը դառնալուն, որ զինադադարէն ետք ամէն առիթօ օգտագործեց հայ կիներն ու մանուկները փրկելու իսլամական գերութենէն:

Յերեան անդամ էր Մուշեղ Արք. Սերոբեանի ղեկավարած Միջագետքի Հայ Օգնութեան կոմիտէին (ՄՅՕԿ): Արքեպիսկոպոսը Յերեանը լիազօրեց հայ վերապրողները ապահով կերպով Տէր Չօրէն Հալէպ փոխադրելու: Երբ Յերեան Տէր Չօր հասաւ, ան հասկցաւ, որ հայերու տեղափոխումը այդքան ալ դժուար չէ, սակայն շատ աւելի դժուար ու կարեւոր էր անապատին մէջ իսլամական տուններու մէջ գերի դարձած հայերը: Սերոբեան համամիտ գտնուեցաւ եւ Ատանայի մէջ իր ֆրանսացի հրամանատարէն խնդրեց Յերեանի արտօնել երթալ Տէր Չօր եւ փրկութեան առաքելութեան ձեռնարկել:

Յերեան հիմնականին մէջ գործէր ճեզիրէի, Շամարիէի, Խերէթայի, Թերպանի, Հաուիժայի, Մէյատինի, Ապուքեմայի, Ժիպուրի եւ Շաուիի մէջ, որոնք կը գտնուէին Տէր Չօրի շրջակայքը: «Տէր Չօրն ու փրկութիւնը հոմանիշներ են ինծի համար», կը գրէ ան ՄՅՕԿ-ի մէկ այլ անդամ Մարտիրոս Գոյումճեանին: «12 պատանի հայ աղջիկներ շատ ազդեցիկ ցեղապետի մէջ ձեռքէն փրկելու եւ իրենց օրինական տէրերուն յանձնելու համար մինչեւ հիմա 1800 ոսկիի գումար մը վճարած ենք, առանց հաշուելու այն ծանր ծախսերը, զորս ունեցանք յաջողութեամբ պսակելու համար այս նախաձեռնութիւնը, որ սերտօրէն առնչուած է ապագայ Հայաստանի վերականգնման»:

Յաճախ, հայկական եւ միջազգային կազմակերպութիւններ քաղաքական պատճառներով բազմաթիւ տարակարծութիւններ ունէին, սակայն հիմնականին մէջ, անոնցմէ իւրաքանչիւրը կը փորձէր լուծումներ գտնել՝ աջակցելով տարբեր կողմերու, որոնք համակարծիք չէին: Բայցեւայնպէս, Յերեան այն եզակի դէմքերէն էր, որ աշխատեցաւ գրեթէ բոլոր գործիչներուն հետ իր առաքելութիւնը կատարելու համար: Չինք հետաքրքրողը արդիւնքն էր: Յերեան գործակցեցաւ անգլիական եւ ֆրանսական իշխանութիւններուն հետ, ՀԲԸՄ-ի, Հայ Ազգային միութեան, Պոլսոյ Պատրիարքութեան, Ազգերու լիկայի ներկայացուցիչներուն, Մերձաւոր Արեւելքի Օժանդակութեան գործիչներուն եւ ուրիշներու հետ:

Իսլամացած հայերու իսլամական հաստատութիւններէն փրկելու գործընթացը կոչուած էր «Փրկութեան առաքելութիւն» կամ «Ազատագրութեան առաքելութիւն»: Դիւրին չէր փրկել այն հայերը, որոնք որդեգրուած էին կամ արդէն ամուսնացած թուրքերու, քիւրտերու եւ արաբներու հետ, կամ որոնք իսլամացած էին: Երբեմն հովանաւորները զանոնք վերադարձնելու պատրաստակամութիւնը չէին ունենար, անոնց ինքնութիւնն ու գոյութիւնը կը թաքցնէին՝ անոնց հետքը կորսնցնելով Միջագետքի ցեղախումբերուն մէջ, զանոնք մէկ տեղէ միւսը փոխադրելով: Հակառակ ճշգրիտ տեղեկութիւններ ունենալուն, երբեմն փնտռողները կրնային ամիսներ եւ տարիներ տեւել առանց արդիւնքի հասնելու:

Եգիպտահայերու ղեկավարութեամբ ազատագրութեան եւ փրկութեան հայկական խումբերը կազմուեցան 1918-ի գարնան: Առաջին խումբը, որ կը կոչուէր «Հայկական արշաւական փրկութեան խումբ», եւ որուն ղեկավարն էր Դամասկոսի մէջ օսմանեան չորրորդ բանակին մէջ ծառայած զինուոր մը՝ Լեւոն Եօթնեղբայրեանը, կը վայելէր



հռչակաւոր արաբ ղեկավար Ֆայսալ իշխանի (որ պայքարեցաւ Սուրիան թուրքերէն ազատագրելու ի խնդիր) եւ բրիտանական բանակի սպայակոյտի աջակցութիւնը: Հաւուրան շրջանին մէջ զինադադարի հաստատումէն ետք, խմբակը յաջողեցաւ փրկուած հայերը Տարաա կամ Դամասկոս փոխադրելու աշխատանքը շարունակել: Երբ Երիտասարդ թուրքերու ղեկավարները 1 Նոյեմբեր 1918-ին փախուստ տուին Թուրքիայէն, փրկարար աշխատանքները նոր թափ ստացան: Նոյեմբեր 1918-ին ՀԲԸՄ-ի եգիպտահայերու Ազգային Փրկութեան յանձնախումբը, Հայկական Ազգային միութիւնը եւ Որբերու Խնամքի Միացեալ միութիւնը կազմեցին յատուկ յանձնախումբ մը: 30 Նոյեմբերին յանձնախումբի կազմակերպիչներէն Թորգոմ Եպիսկոպոսը այս նորաստեղծ մարմինի անդամներուն յղեց ցուցմունք-ծրագիր մը, որ նշեալ մարմինին գործունեութեան անկիւնաքարը եղաւ: Հերեան այս խումբի անդամներէն մէկն էր:

Ցուցմունք-ծրագիրէն օրինակ մը կը գտնուի Հերեանի անձնական արխիւին մէջ եւ կը բաղկանայ 15 կէտերէ: 3-րդ եւ 8-րդ կէտերը ուղղակիօրէն կապ ունին փրկութեան գործընթացին հետ: Այդ ցուցմունքներուն ընդհանուր գաղափարը հետեւեալն էր. «Բոլոր հայերը, որոնց անունները փոխուած են եւ բռնի կերպով իսլամացուած, պետք է ազատագրուին եւ վերադարձուին, եւ եթէ իսլամներու կողմէ առեւանգուած են՝ ամէն ինչ պետք է կատարուի զանոնք փրկելու համար»: Փետրուար 1919-ին Հալէպի մէջ հակահայ տրամադրութիւնները, որոնք պատճառ դարձան հարիւրաւոր հայերու մահուան, բարդացուցին գործիչներուն առաքելութիւնը: Բրիտանական իշխանութիւնները Սուրիոյ իսլամական իշխանութիւններուն ըմբոստութենէն վախճան եւ խնդիրներէ խուսափելու համար փորձեցին յետաձգել փրկարար աշխատանքները: Հերեան իր նամակներուն մէջ կը նշէ անգլիական իշխանութիւններուն վարած քաղաքականութիւնը: Բայցեւայնպէս, կացութեան լրջութեան ու կարեւորութեան գիտակցելով՝ ան ամէն ջանք թափեց անոնց հետ լաւ յարաբերութիւններ պահելու համար: Ամէն պարագայի՝ Հերեան փրկարար գործընթացը չդադրեցուց: Ֆրանսական իշխանութիւնները Սուրիոյ հոգատարութիւնը ստանձնելէ ետք, Հերեան բազմաթիւ առիթներ ունեցաւ իր աշխատանքը շարունակելու:

Հարկ է նշել, թէ Սեւրի դաշնագիրը կը պարունակէր յօդուած մը, որ կը վերաբերէր փրկութեան հարցին: Յօդուած թիւ 142-ը կը նշէր, թէ 1914-1918 ժամանակաշրջանին Թուրքիոյ մէջ բռնակալ վարչակարգին տնօրինութեամբ բռնի իսլամացումները համատարած մարտավարութիւն էր, եւ կայսրութենէն կը պահանջէր գործակցիլ Ազգերու լիկային կողմէ նշանակուած խառն յանձնախումբներուն հետ՝ փնտռելու եւ փրկելու այդ մարդիկը «կարելի եղածին չափ դարմանելու համար պատերազմի օրերուն Թուրքիոյ մէջ գործադրուած ջարդերուն ընթացքին անհատներու կրած անիրաւութիւնները»:

Հերեան շուրջ 50 տարեկան էր, երբ Միջին Արեւելք եկաւ միանալու համար փրկարար աշխատանքներուն: Մոխրագոյն մազերուն եւ զուարթ նկարագրին պատճառով անոր ծածկանունն էր «մոխրագոյն մազերով երիտասարդ»: Զանի մը ամիս ետք ան վերանուանուեցաւ «հայ որբերուն լրտեսը», «ազատագրողը» եւ «փրկիչը»: 1919-ին ՀԲԸՄ-ը հաստատեց փրկութեան ֆոնտ մը ի նպաստ «կենսական ծրագիրին՝ փրկելու որբերը, որոնք կորուսած էին անապատին խորքը, ինչպէս նաեւ կանանոցներէն փրկելու հայ երիտասարդ աղջիկները»: Ապրիլ 1919-ին, Հերեան պարտականութիւնը ստանձնեց փնտռելու Հալէպ, Տեր Զօր եւ անոնց մերձակայքը գտնուող շրջաններուն մէջ հայ կիներն ու մանուկները: Հերեան իւրայատուկ էր բաղդատմամբ այլ փրկարարներու, որովհետեւ հիմնականին մէջ իր առաքելութիւնը կը կատարէր Տեր Զօրի՝ «ոճիրի քաղաքին» մէջ (ինչպէս ինք կը կոչէր):



Հերեան շատ մտահոգ էր նիւթական միջոցներու բացակայութեան պատճառով: Ան հայերու դիմեց կարելի եղածին չափ մեծաթիւ հայեր փրկելու նպատակով դրամ հաւաքելու համար: Ըստ Հերեանի, պէտք էր շտապել: Յաջորդ օրը կրնար ուշ ըլլալ փրկելու համար առեւանգուած կիներն ու մանուկները: Ան 30,000 ոսկիի պէտք ունէր փրկելու համար 500 կին ու որբ: Դրամը հաւաքելու համար ան Տէր Զօրէն կը մեկնէր Պոլիս, դասախօսութիւններ ու զրոյցներ կը կատարէր եւ դրամական օժանդակութիւն կը խնդրէր: 1919-ին «Ժողովուրդի ձայն»-ին մէջ լոյս տեսած յօդուածէ մը կ'իմանանք, թէ ան յաջողեցաւ 11,000 ոսկի գոյացնել, եւ օրաթերթին յաջորդ էջերը լեցուած են Հերեանի առաքելութեան նուիրատուութիւն կատարածներու անուններով: Պէտք է նշել, թէ ոչ միայն հարուստ հայերը մասնակցեցան այս դրամահաւաքին, այլ երբեմն նաեւ ցեղասպանութենէն վերապրածները իրենց վերջին լումաները տուին փրկարարներուն: Օրինակի համար, 1919-ին «Ժողովուրդի ձայն»-ը հրատարակեց յօդուած մը, որուն մէջ կը յիշատակէ ցեղասպանութենէն վերապրած երկու կիներ, որոնք փախուստ տուած էին Տէր Զօրէն եւ իրենց վերջին լուման տուին Հերեանի ղեկավարած փրկարար առաքելութեան:

6 Սեպտեմբեր 1919-ին, Ատանայի մէջ լոյս տեսնող «Հայ ձայն»-ը կը նշէր. «Անապատի մեծ մարդը՝ հոյակապ Ռուբէն Հերեանը... արդէն վեց ամիս է ամեն բան մոռնալով անշահախնդիր խանդավառութեամբ ինքզինք նետած է սպանդանոցին մէջ՝ հաւաքելու համար հայերու մնացորդները: Աշիրէներու (քրտական ցեղախումբեր) ղեկավարները զինք կը ճանչնան իբրեւ Մուֆթեփշ Էլ-Արման (Հայերը փնտռողը): Անկարելի է անշուշտ առանց կաշառքի, դրամը քիչ է, սակայն ամեն առիթ կ'օգտագործէ փրկելու համար հայ գերիները»:

Նոյն օրը Հերեան գրեց նամակ մը Ատանայի իր ազգական ու մօտիկ բարեկամ Մետաքսի՝ նկարագրելով իր վատ առողջութիւնը, սակայն նոյն ատեն նշելով իր առոյգութիւնն ու խանդավառութիւնը՝ փրկելու համար հայ որբերը եւ օժանդակելու այն մարդոց, որոնք իրեն դիմած են գտնելու իրենց ազգականները: Իրեն համար մեծագոյն վարձատրութիւնը փրկուած հայերու ուրախութիւնն է:

Մասնաւորաբար հետաքրքրական է Տէր Զօրէն Մետաքսին յղած իր 19 Յուլիս 1919 թուակիր նամակը: Նամակը ցոյց կու տայ այն դժուարութիւնները, զորս ան դիմագրաւած է 320 անձերէ կազմուած առաջին կառավանք Հալէպ փոխադրելու եւ 350 որբեր լաստերով Պաղտատ փոխադրելու ժամանակ, ինչպէս նաեւ բազմաթիւ հայ կիներ զանոնք գերեվարողներէն գնելու եւ առեւանգուածները փնտռելու ընթացքին. ամենէն դժուարը համոզելն էր այն հայերը, որոնք արաբներու կողմէ կատարուած սպառնալիքներուն պատճառով կը մերժէին ձերբազատուիլ իրենց տէրերէն: Ան գրեց իր դիմագրաւած նիւթական գլխաւոր դժուարութեան մասին եւ իր պահեստի դրամներուն մասին, որոնք ամբողջութեամբ ծախսած է այս աշխատանքը ֆինանսաւորելու համար: «Սիրտս կ'արիւնի, երբ մտածեմ նիւթական սնանկութեանս մասին: Շատ ծերացած եմ եւ չեմ կրնար նպատակիս հասնիլ», կը գրէ ան: «Ոչ միայն դրամ չկայ, սակայն մարդիկ ալ չկան», կ'աւելցնէ ան: Նոյն նամակին մէջ ան կը գրէ այն ազգային գործիչներուն մասին, որոնց համար որբերու եւ կիներու ազատագրումը կարելոր հարց մը չէ, եւ ինչպէս անոնք այլ գործերով զբաղած են: Ան նոյնիսկ Փարիզի մէջ խաղաղութեան խորհրդածողովին մասնակցած «Հայ Ազգային Պատուիրակութեան» անդամներուն կ'ակնարկէ իբրեւ «խօսքով հայրենասէրներ»: Ըստ Հերեանի, օրուան ամենէն հրատապ հարցը փրկութեան առաքելութիւնն է: «Կրնամ' ըլլալ, որ անմիտ մըն եմ, կամ թէ «խօսքով հայրենասէրները»



խմաստուն են: Ամեն պարագայի, չեմ կրնար սկզբունքներուս հակառակ գործել: Որբերը ապագայ Հայաստանի հունտերը պիտի դառնան, փրկուած իւրաքանչիւր հայ շահ է, անոնք սրտիս մասնիկներն են: Անապատին մէջ դեգերելու ընթացքին, այդտեղ, արեւուն տակ, փայլող ճերմակ գանկերն ու ոսկորները կը կանչեն. «Մեր որբերը ազատ արծակէ»... Եւ ո՞վ կրնայ այդ ամենը տեսնելէ ետք անտարբեր ըլլալ... պիտի աշխատիմ մինչեւ մեռնիմ»:

Մերձաւոր Արեւելքի մէջ Ազգերու լիկայի ներկայացուցիչ Քարեն Եփփէի որդեգիր զաւակին, փրկարար առաքելութեան ամենէն յայտնի գործիչներէն Միսաք Մելքոնեանի հետ Յերեանի գործակցութիւնը շատ կարեւոր էր: Մելքոնեան կ'աշխատէր թէ՛ հայ, թէ՛ ալ արաբ գործընկերներու հետ, ինչ որ մեծապէս կը դիւրացներ փրկութեան գործողութիւնները: Ան կազմեց ձիաւորներու խումբ մը, որ իր հրամանատարութեան տակ անապատի քոչուորներու վրաններուն մէջ փնտռեցին ու փրկեցին հայ որբեր ու կիներ: Երբեմն այդ խումբերը կ'անցնէին սահմանին թրքական կողմը եւ կ'ազատէին թուրքերու եւ քիւրտերու կողմէ առեւանգուած կիներ ու մանուկներ: Վերապրողները հաստատուած էին Հալէպի մէջ՝ Շէյխ Թահա շրջանի պարտեզներուն մէջ, որ կը գտնուի քաղաքի հիւսիսային մասը, Քուէջք գետի ափին: Ներկայիս ամենէն խճողուած արուարձաններէն մէկը եղող շրջանը օրին քաղաքէն հեռու էր: Վրանները ապաստան էին որբերու, գաղթականներու եւ այրիներու համար, որոնք Թուրքիայէն կամ քոչուորներէն փախուստ տուած էին: Բոլոր վերապրածներուն կը տրամադրուէր սննդեղէն, բժշկական խնամք եւ հագուստ: Անոնց ինքնութիւնը կը ճշդուէր եւ անունները կը փոխանցուէին օրաթերթերուն, եկեղեցիներուն եւ հայ համայնքներուն՝ գտնելու համար անոնց ազգականները: Քաղաքէն շատեր կու գային Նորեկներուն մէջ իրենց զաւակները գտնելու կամ իրենց ազգականներուն ճակատագրին մասին տեղեկութիւն ստանալու համար:

Փրկուած հայ տղոցմէ ոմանք չէին լքեր Յերեանը եւ կը փորձէին օժանդակել անոր: Անոնք արաբներու մէջ ապրելու փորձառութիւնը ունէին եւ գիտէին որդեգրուած հայերու գտնուած վայրերը: Գոյութիւն ունէին նաեւ երիտասարդներու խումբեր, որոնք Յերեանէն արտօնութիւն կը խնդրէին մասնակցելու համար փրկարար գործողութիւններուն, կամ անշատ գործողութիւն մը կատարելու: Օրինակի համար 5 Փետրուար 1920-ին, Յերեան ստացաւ նամակ մը թատեմցի (Խաբէրդ) խումբ մը երիտասարդներէ, որոնք Յերեանէն ցուցմունք կը խնդրէին, որպէսզի կարենան Ուրֆայի եւ Մարտինի տարածքին մէջ հայ կիներ ու մանուկներ փրկել:

Յերեան ոչ միայն կիներու եւ մանուկներու փրկութեան կը մասնակցէր, այլ նաեւ անոնց վերաբնակեցման եւ վերընտելացման: Իրենց ապրած առեւանգումի երկար տարիները, ֆիզիքական եւ սեռային չարաշահումները՝ ֆիզիքական ու հոգեբանական խախտումներու պատճառ կ'ըլլային: Անոնք ընկերութեան մաս կազմելու համար օգնութեան կարիք ունէին: Յերեանի հետ գործակցող առաջին կազմակերպութիւններէն մէկն էր Հալէպի Հայուհեաց միութիւնը: Նշեալ կազմակերպութիւնը իսլամական հիմնարկներէ փրկուած չարաշահուած հայ կիներու համար ապաստանարան մը հաստատեց: Յունիս 1919-էն սկսեալ 45 հայ կիներ այդտեղ ապաստանած էին: Նոյն տարուան Դեկտեմբերին, մէկ այլ ապաստանարան մը հաստատուեցաւ Դամասկոսի մէջ:

Օրուան ամենէն բարդ հարցերէն մէկը այս կամ այն պատճառով իրենց հայկական ինքնութիւնը ճանչնալ մերժող որբերու եւ կիներու ճակատագիրն էր: Անոնց մեծամասնութիւնը շատ փոքր տարիքէն խլուած էին իրենց հայկական արմատներէն եւ մոռցած իրենց մայրենի լեզուն ու ազգութիւնը: Սակայն նաեւ կային որբեր ու կիներ, որոնք



հակառակ յիշելուն կը մերժէին ճանչնալ իրենց հայկական ծագումը: «...անցեալի արհաւիրքներու եւ սարսափի ազդեցութիւնը այնքան մեծ էր, որ երբեմն կը նախընտրէին չփրկուիլ, այլ շարունակել 60 տարեկան կոյր մարդոց որպէս հարձ ապրիլ եւ անոնց վրաններուն մէջ ապահով զգալ», կ'ըսէ Զերեան հարցազրոյցի մը մէջ: Ան նաեւ կը յիշատակէ կիներ եւ աղջիկներ, որոնք աղաչած են իրեն, որոնք գիշեր ու ցերեկ աղօթած են փրկուելու համար: Նոյնիսկ կանանոցներու մէջ, անոնցմէ ոմանք երբեք չդադրեցան հայ քրիստոնէաներ ըլլալէ եւ փրկուելէ ետք անոնք իրենց վզին միշտ կրեցին խաչ մը եւ երգեցին «ԱՄԱԼՈՒ ԼՈՒՍԻ»:

Յոգեբանի յարիր կերպով Զերեան որբերն ու կիները կը դարձան յատուկ ուշադրութեամբ: Երբեմն յաջողեցաւ, երբեմն ձախողեցաւ, սակայն երբեք չյուսահատեցաւ: Այն պարագաներուն, երբ անհատները իրենց հայ ըլլալը չէին ընդունել, Զերեան փրկուածները հինգ օր իր մօտ կը պահէր եւ հինգերորդ օրը անոնց հայկական ծագումին մասին կը հարցնէր, անոնց պատասխանը կը վճռէր անոնց ապագան:

Վերապրածներու ինքնութեան շուրջ անորոշութիւնը փարատելու համար Պոլսոյ հայ պատրիարք Զաւէն Եղիայեան փրկարար առաքելութեան գործիչ Առաքել Զաքրիեանի եւ բրիտանական իշխանութիւններուն հետ հաստատեց «Չեզոք տուն»-ը, որուն վարչութիւնը կը բաղկանար հայ, ամերիկացի եւ թուրք անդամներէ: Վարչութիւնը կը քննէր իւրաքանչիւր վերապրածի տուեալները եւ կը ճշդէր անոր ինքնութիւնը:

Զերեանի մտահոգութիւններէն մէկն էր կանանոցներէն փրկուած հայ աղջիկներու ճակատագիրը: Ան բազմաթիւ անգամ հայ կամաւորներու կոչ ուղղեց ամուսնանալու որբերուն հետ: 10 Ապրիլ 1919-ին, ան հետեւեալը գրեց Մետաքսին ուղղած իր նամակին մէջ. «Ամուսնութեան ի նպաստ ուժեղ քարոզչութեան սկսայ հոն, ուր կրնամ: Լաւ արդիւնք տուաւ: Միայն 350 այրիներէ եւ աղջիկներէ բաղկացած Ատանայի ապաստան-գործատուներուն մէջ օրական 1 կամ 2 եւ երբեմն ալ 4 պսակներ ունինք: Ամերիկայէն բազմաթիւ հայ կամաւորներ անոնց հետ կը նշանուին...»:

Պետք է նաեւ նշել, թէ անոր արխիւին մէջ կան Զերեանի յղուած շարք մը նամակներ, որոնք իրենց պարունակին մէջ փոքր պատմութիւններ են, ուր Զայոց ցեղասպանութեան կարգ մը հանգրուաններ կը նկարագրուին: Նամակները ցեղասպանութեան ընթացքին եւ անկէ ետք ոմանց կեանքէն պատառիկներ պարունակող փազըլներու կը նմանին: Նոյն ատեն անոնք կը պարունակեն մանրամասնութիւններ, ինչպէս տեղանուններ, անուններ եւ ֆիզիքական նկարագրութիւնը կորսուած զաւակներու, ծնողներու, որդիներու եւ դուստրերու, որոնք առեւանգուած են: Զերեանէն կը խնդրուէր գտնել զանոնք:

Հոկտեմբեր 1919-ին, Զերեան մեկնեցաւ դէպի Պոլիս եւ վերադարձաւ Ատանա դրամահաւաք կատարելու համար: Ան իր բարեկամներուն կողմէ հաւաքուած գումարը առաւ եւ վերադարձաւ Տէր Զօր՝ շարունակելու համար «անապատի կենսական առաքելութիւնը»: Սակայն Դեկտեմբեր 1919-ին, անապատին մէջ իրարանցում կար, արաբական ըմբոստութիւն մը ծագած էր: Անոնք յարձակեցան Զերեանի տան վրայ, աւարեցին ու քանդեցին զայն: Զերեան յաջողեցաւ փրկել ազատագրուած կիներն ու մանուկները՝ զանոնք պահելով իր արաբ բարեկամին տան մէջ: Ան հազիւ կրցաւ հաստատ մահէ փրկուիլ: Տէր Զօրի հայ եկեղեցին աւարուեցաւ եւ սրբապղծուեցաւ: Զերեան վերադարձաւ Զալէպ, ապա Ատանա, ուր դրամահաւաք կատարեց եւ վերադարձաւ Տէր Զօր՝ կրկին շարունակելու համար իր առաքելութիւնը:



Իր նամակներէն ի յայտ կու գայ, որ 1920-ին, մինչ հայկական կազմակերպութիւններն ու բարեսիրական միութիւնները դրամահաւաք կը կատարէին արդէն իսկ փրկուած որբերու եւ կիներու համար՝ Զերեան երբեք չդադրեցաւ «Փրկութեան առաքելութեան» համար դրամահաւաք կատարել, սկիզբը Եւրոպայի մէջ, ապա Ամերիկայի: Երբ Ամերիկա վերադարձաւ՝ կը մտադրէր ամուսնանալ հայ որբի մը հետ եւ հաստատուիլ Մերսինի, Կիլիկիոյ մէջ, սակայն դժբախտաբար Զերեան սրտի կաթուածի պատճառով մահացաւ Գահիրէ, Եգիպտոսի մէջ՝ իր ամուսնութեան համար որոշուած թուականէն քանի մը օր առաջ:

Թուրքերու, քիւրտերու, արաբներու, չեչեններու, չերքեզներու եւ այլոց կողմէ առեւանգուած հազարաւոր հայ կիներն ու մանուկները փրկելու առաքելութիւնը ցեղասպանութեան յաջորդող հանգրուանի ամենէն կենսական հարցերէն մէկն էր, որ անմիջական լուծումի կը կարօտէր: Այդ առաքելութեան ոչ միայն ընկերային կազմակերպութիւններ մասնակցեցան, այլ նաեւ անհատ հայեր եւ հովանաւորներ, որոնք ոչ մէկ ջանք խնայեցին այդ գործը կատարելու համար: Այս առաքելութեան ամենէն նուիրեալ դէմքերէն մէկն էր ամերիկահայ գործարար, Զայկական լեգէոնի կամաւոր Ռուբէն Զերեան, որ մինչեւ իր մահը (1921) իր կեանքը եւ հարստութիւնը նուիրեց փրկարար գործողութիւններուն: Զերեանի մահէն ետք փրկարար գործողութիւնները չդադրեցան. հազարաւոր հայեր անկէ ետք փրկուեցան:

Աննա Ալեքսանեան

«Արմինիըն Ուիքլի»

Թարգմանեց՝ Վահրամ Էմմիլեան

ԻԲՐԵԻ ԱՐԾԻԻ...

Խմբագրական «Պայքար»ի



Կը բաւէ այս երգի երկու բառերը արտասանել, եւ արդէն երգը կը կազմաւորուի եւ Անդրանիկի հոգիին նման կը սաւառնի հայրենի լեռներուն վերեւ:

Բանաստեղծ Վահան Թեքէեան ունի խմբագրական մը նուիրուած մեր ազգային հերոսին, որ կը սկսի մօտաւորապէս հետեւեալ պատկերով. «Անդրանիկ, անունը դուրս կը ժայթքէ շրթներէն արծակուող փամփուշտի մը նման...»

Չօրավար Անդրանիկ Օզանեան արդէն իսկ առասպել մըն էր կեանքի օրերուն ու դարձաւ դիւցազնապէս իր մահուընէ յետոյ: Ան իր հրեղէն սուրով շանթագրեց հայոց երկնականարին վրայ հայ ժողովուրդին արիացումը՝ ահաւոր ուժերու դէմ եւ անոր վճռականութիւնը՝ գոյատեւելու դարերն ի վեր: Իր պատերազմներն ու իր յաղթանակները աւարտեցան աղիտալի դրուագներով՝ պատմութեան անյեղի կոհակներու դէմ:

Շահան Շահնուր Անդրանիկը դասած է հայ ժողովուրդի հոգեկան չորս գագաթներու կողքին՝ միւսներն ըլլալով Մաշտոցը, Կաթողիկէն ու Կոմիտասը:

Անցնող տարին հանգրուանն էր անոր ծննդեան 150 ամեակին, ծնած ըլլալով 1866-ին Շապին Գարահիսարի մէջ: Սակայն անոր 150 ամեակին առիթով եւ «ոչ փող զարկինք եւ ոչ թմբուկ», պիտի ըսեր Սկրտիչ Պեշիկթաշեան:

Արդարեւ, համարեա՛ ոչ մէկ նշում Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, եւ այդ լռութիւնը ազդարար խորհրդանշանն է, թէ մենք որքան ենք հեռացած մեր սրբութիւններէն ու մեր ինքնութենէն:

Անդրանիկի կեանքը բազմիմաստ էր իբրեւ ազգային հերոս, որ բնագոյով էր դիւանագետ եւ մտքով՝ ռազմագետ: Ան ծնունդն էր հերոսական Շապին Գարահիսարի, որուն պաշտպանական դիւցազներգութիւնը դեռ պիտի գրուի՝ համամարդկային հնչեղութիւն ստանալու համար Մուսա լեռան ինքնապաշտպանութեան մարտերուն նման, որոնք Ֆրանց Վերֆելի գրիչով թակեցին մարդկութեան խիճղը:

Երբ թուրքը պաշարեց Շապին Գարահիսարը, ժողովուրդը բարձրացաւ լեռ եւ կռուեցաւ մինչեւ իր վերջին փամփուշտը: Անվեհեր ֆետայիներ յուսահատ շարքերով փորձեցին ճեղքել թրքական պաշարումը, սակայն մեծ մասով ինկան նահատակ: Իսկ անկարները, կիները, երախաները մնացեալ վառօդի վերջին բաժինները իբրեւ թոյն խմելով՝ մերժեցին յանձնուիլ թուրքին: Այսպիսով անոնք նոր Մասատա մը արձանագրեցին մարդկային պատմութեան դեռ չգրուած Կտակարանին մէջ:



Ահա, այդ դիւցազնական ցեղին կերպասէն էր կտրուած Չօր. Անդրանիկ, որ մարտնչեցաւ թէ՛ պատմական Հայաստանի մէջ ու թէ՛ Արեւելեան Հայաստանի մէջ. ան 1920-ին իր զօրքով յառաջացաւ մինչեւ Ղարաբաղ՝ խափանուելու համար անգլիական դիւանագիտութեան եւ զէնքի ուժով: Իրօք անգլիացիք կը հաւաստէին, թէ Ղարաբաղի հարցն ալ պիտի լուծուէր մօտ օրէն ստորագրուելիք Սեւրի դաշնագիրով:

Անդրանիկի կեանքը դրուագուած էր Տիլիմանի, Սասունի, Կարսի, Չանգեզուրի, Առաքելոց վանքի եւ այլ հայակոխ սարերու կռիւներով ու դաւերով: Անդրանիկի կեանքին դէմ սարքուեցան բազում դաւեր, որքան թշնամիին, նոյնքան՝ իւրայիններու կողմէ: Երբ կուսակցութիւններ եւ քաղաքական ղեկավարներ պահ մը իթթիհատական թուրքերուն հաւատալով զէնքերը վար կը դնէին՝ փոխան օսմանեան խորհրդարանի երեսփոխանական աթոռներուն, Անդրանիկ հեռու մնաց փառքի որոգայթներէն՝ ահագանգելով, որ կարելի չէր վստահիլ թուրքին: Եւ հակառակ յեղափոխական ու ռազմական այդ շփոթ տարիներուն եւ հակառակ ճաշակած ըլլալով ցարական Ռուսիոյ բանտի չարիքները՝ ան միշտ ջատագով էր Ռուսաստանի բարեկամութեան, պատմութիւնը դիտած ըլլալով իր դարերու տարածքով:

Անդրանիկի կրթութիւնը սահմանափակ էր ընթացիկ իմաստով, սակայն ան ինքնուս հանճար մըն էր՝ բառը գործածելով պատասխանատուութեամբ:

Անդրանիկ իբրեւ ռազմական միտք աւելի ճանչցուեցաւ ու գնահատուեցաւ ֆրանսացիներէն, պուլկարներէն եւ այլ ազգերէ, որոնք զինուորական աստիճաններ ու շքանշաններ պարգեւեցին իրեն: Անոր հեռատեսութիւնը եւ քաղաքական հոտառութիւնը յաճախ բախումի մէջ եղան կուսակցութեանց եւ իշխանութեանց հետ, եւ այդ պատճառաւ ալ հասաւ այն պահը, երբ ինք հրաժարեցաւ Դաշնակցութենէն, թէեւ այդ արարքով ոչ մէկ բան պակսեցաւ անոր վարքէն, այլ ան արժանացաւ ազգային հերոսի փառապսակին: Այդ խզումով հանդերձ, ան մնաց պաշտելին՝ բոլոր կուսակցական եւ ոչ կուսակցական հատուածներուն: Բովանդակալից կեանք մըն էր, որ ապրեցաւ մեր հերոսը, սիրագործութիւնները արգելափակուած տեսնելով թէ՛ մեծ պետութեանց շահերով եւ թէ ժամանակի քաղաքական ղեկավարներու շահադիտութեամբ ու կարճատեսութեամբ:

Երբ հաստատուեցաւ Հայաստանի առաջին անկախութիւնը, Անդրանիկ արդէն հակասութեան մէջ էր Ազգային Խորհուրդին հետ: Չնայ Էջմիածին եւ զօրացրեց իր «Անանձին հարուածող գունդ»-ը եւ բաժնուեցաւ իր հարազատ զինուորներէն, իր սուրը յանձնելով Ամենայն հայոց կաթողիկոսին:

Այդ շրջանին Հայաստանի իշխանաւորները փորձեցին համոզել Անդրանիկը, որ մնայ Հայաստան՝ պաշտօններ խոստանալով անոր: Սակայն, զօրավարը արհամարհանքով մերժեց առաջարկները «անպէտ եւ անժողովրդավար» կուսակցական ղեկավարներու, որոնք «ոչինչ կը հասկնան դիւանագիտութենէն»:

Ան զայրոյթով վերջին կոչ մըն ալ յղեց օրուան իշխանաւորներուն ըսելով. «Երեւանեան կառավարութենէն կը պահանջեմ այն կարեւոր գումարը, որ արտասահմանի հայութիւնը իմ բանակի համար, իմ անունին դրկած էր երեւանեան հասցեով, որոնք դրամը ստացան, զոր վար դրին, իրենք ուտելու համար, որուն այնքան պէտք ունէի»:

Ուրեմն, չգարմանանք անցեալ Ապրիլին հայոց բանակին մէջ կատարուած խորումներէն, որոնք աղիտալի կորուստներ պատճառեցին Հայաստանին, մեր զինուորներուն: Պարզ է, թէ



բանակին յատկացուած դրամին բաժինը ուտելու ախորժակը շատ հին պատմութիւն ունի եւ կու գայ այդ օրերէն:

Անդրանիկ արտասահման գալով նախ մնաց Փարիզ: Ան երիտասարդութեան ամուսնացած էր, բայց կորսնցուցած էր կինն ու զաւակը, կեանքը նուիրելով ֆետայութեան: Իր հասուն տարիքին ան կրկին ամուսնացաւ իր քրոջ ընկերուհիին՝ Նուարդին հետ, եւ իր խաղաղ տարիները տրամադրեց հանգանակութիւններու եւ աղետեալներու ու վիրաւոր զինուորներու կարիքներուն, գործակցելով Ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար Փաշային հետ: Այդ երկու անունները այնպիսի հզօր ժողովրդականութիւն մը ունէին, որ ժողովուրդը լիաբուռն կը բանար իր սիրտն ու քսակը անոնց կոչերուն դիմաց:

Ազգային հերոսը Փարիզէն անցաւ Ամերիկա եւ հաստատուեցաւ Ֆրեզնօ, միշտ շրջապատուած իր հարազատ ժողովուրդին աղապատանքով: Ֆրեզնոյի մէջ Ուիլիըմ Սարոյեան յաճախ կը հանդիպի եւ իր յուշերուն մէջ եղերական գիծերով եւ քիչ մըն ալ հեզնանքով կը նկարագրէ անկեալ հերոսին վիճակը:

Ան կը մահանայ 1927-ի Օգոստոս 31-ին ու կը թաղուի Ֆրեզնոյի մէջ: Իր մահուընէ առաջ ան կը պատուիրէ իր կնոջ. «Կուգեմ, որ իմ աճիւնս հանգչի Արաքսի ու Չանգուի ափին, իմ սիրելի ժողովուրդին մէջ, որուն ազատութեան համար կռուեցայ»:

Համաձայն հերոսի փափաքին՝ կարգադրութիւններ կ'ըլլան իր աճիւնը 1928-ին փոխադրելու Հայաստան: Սակայն, թուրքը գերեզմանէն ալ անդին կը հալածէր մեր ազգային հերոսը: Արդարեւ, սովետական իշխանութիւնները, չվիրաւորելու համար զգայնութիւնները հարեւան Թուրքիոյ, կ'արգիլէն Անդրանիկի աճիւններու փոխադրութիւնը Հայաստան, եւ ան կը թաղուի Փարիզի Փէր Լաշէզի գերեզմանատան մէջ: Անոր դամբանը ուխտավայր մը կը դառնայ հայրենասէր հայերու եւ մտաւորականներու համար: Անգամ մը գրող Վարդգէս Պետրոսեան այցելելով Փէր Լաշէզ կը գրէ. «Ե՞րբ կը լինի գերեզմանների հայրենադարձութիւնը»:

Եւ եղաւ այդ հայրենադարձութիւնը Հայաստանի երկրորդ անկախութենէն վերջ:

Բայց պիտի ըսենք՝ երանի չըլլար:

Երբ Հայաստան անկախացաւ, նոր իշխանութեան առաջին գործերէն մէկը եղաւ հրապարակէն հեռացնել Լենինի արձանը: Որքան խոհեմ էր այդ որոշումը, նոյնքան տխմար էր արձանին գեղազարդուած պատուանդանին քանդումը:

Ազգային արժանապատուութեան անգիջելի հարց է, որ այդ պատուանդանին վրայ բարձրանար Անդրանիկի արձանը: Այլ ընտրանք չկայ մեր պատմութեան մէջ: Եւ իր աճիւններն ալ կարելի էր զետեղել առանձին դամբանի մը մէջ: Եռաբլուրի մէջ հանգրուանելը այդ աճիւններուն, խորհրդանշական կերպով կ'արդարանայ, այնքան որ ան կը գտնուի ուրիշ ազգային հերոսի մը՝ Վազգէն Սարգսեանի դամբանի կողքին, որովհետեւ վերջինս իրագործած էր կերպով մը Անդրանիկի երազը: Ազգային հերոսը իր «Առանձին հարուածող զօրագունդ»-ին փոխարէն պիտի ուզէր տեսնել սպարապետ Վազգէնի կերտած արդիական բանակը:



Ատկէ անդին՝ տակաւին հանգստացած չեն զօրավար Անդրանիկի աճիւնները, ինչպէս չեն հանգստացած սիրտերը հայութեան: Անդրանիկը ամբողջական հայութեան համազգային խորհրդանիշն է:

Ցաւօք սրտի արեւելահայերու գաւառական հայրենասիրութիւնը եւ Դաշնակցութեան վերապահութիւնը կը շարունակեն զլանալ Անդրանիկին այն տեղը, որուն արժանի է ան:

Անոր անհանգիստ հոգին կը շարունակէ սաւառնիլ ,լեռ ու ժայռէ եւ թնդացնել «երկինք երկիր տենչավառ»:

Այո, կը սաւառնի ան՝ մինչեւ գտնէ իր արժանի թառն ու դարը:



Գրական-Մշակութային

ՓՈԻՆՋ ՍԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՄՈՒՍԱՅԻՍ..

Դու եմ միշտ եկար անակնկալ

Շանթի նման որ պատռէ երկինքն

Լոյսի շեղբով՝ հրեղէն լեզուակ

Փայլատակէ լոյսեր հրածին

Աշխարհն համակ խառնէ իրար

Ո՛վ իմ մուսաս հրաշածին....

Քանի անգամ պատահեցաւ

Որ քեզ կանչեմ մենութեանս մէջ

Աղերսանքով սրտապատառ

Բայց դու երբեք զիս չլսես

Անարձագանգ թողուս իմ կանչն

Քու քմայքներով խորհրդահեւ...

Տարածամին յայտնուեցար

Որ շփոթիմ ես դողահար

Փորձեմ բռնել ճաճանչն լոյսիդ

Խենթի նման հուրքովդ այրիմ

Եւ մնամ միշտ կարօտակէզ

Անյագ սիրով մը սիրահեւ...

Եւ մնամ միշտ քեզ սիրահար...Ե.Գ.

.....



Ես աշխարհէն բան չեմ ուզեր
Միայն գարունս վերադառնար
Համակ խիղճ էր, սէր, կարօտներ
Արեան եռքս վերադառնար...

Առանց գարնան, յոգնած կեանք է
Անկիրք, խոհեմ իմաստութիւն
Իսկ իմ հոգին դեռ խելառ է
Անկադապար կենսաբեցում....

Ես դեռ կ'ուզեմ գարունն գրկել
Նոյնանալ խօլ տարերքին հետ
Կ'ուզեմ երթալ դաշտ ու անդեր
Խենթեցած հողն համբուրել....

Իմ մէջ դեռ կայ գիժը պարման
Որ կրակ ունի իր մէջ առկայծ
Առանց կրակի ապրի՞լ կ'ըլլայ
Խոհեմութեա՛մբ մը ծերացած....Ե.Գ.

.....

Ժամանակի գգուանքը լուռ
Թել-թել խամրեց վարսերս հուր
Ամպ առ ամպ բերաւ թախիծ
Դիզեց հոգւոյս լոյս երկինքին....

Շոյանքն անոր հանապազօր
Ստուեր բերաւ քօղ առ քօղ
Աչքերուս վառ, արեգնափայլ



Լոյս ժպիտիս վարդաշուշան...

Թաւաքն անոր ակօս բացաւ
Ճակատիս վրայ վսեմափայլ
Իմաստնութեան հունտեր դրաւ
Որ ընծիւղին ու ծաղիկ տան...

Աւերներուդ դէմ յանդիման
Ես քեզ կ'օրհնեմ, իմ ժամանակ
Ձի պտուղն իմաստութեան
Քու գգուանքիդ եմ պարտական....Ե.Գ.

.....

Արարումի լոյս պահերուն
Սուրբ խորանին հայ բառերուն
Մտքի, սրտի յոյզս թրթռուն
Կը մատուցեմ ես լուսաբոյր...

Պատարագին հոգենուէր
Մէն մի բառը ճաճանչ մըն է
Որ կաթոգին գիս կը գգուէ
Նոր սէր, գորով կը հաղորդէ...

Մէն մի բառը կեանք մըն է
Հին դարերէն եկած նուէր
Ձոր իմ սրտիս մատուցումով
Կը համբուրեմ տենդով նորոգ...

Տէ՛ր, բառերը սուրբ հայկազնեան



Կենսանորոգ թող կայծկլտան

Չժանգոտին, չծերանան

Բառարանին մէջ հնացած...

Թող կենսատրուի հոգի դառնան

Նորոգ հմայքով մը Մեծասքանչ...Ե.Գ.

.....

Դժուար է գիտ հասկնալը

Անչափ դիւրին ու բարդ եմ ես

Դիւրին ինչպէս դաշտի խոտը

Որ դալարի անձրեւէն ետք

Կանաչ-կանաչ ու յորդագեղ

Բայց խորշակէն կ'ըլլայ հրակեզ....

Դիւրին ինչպէս տերեւը պարզ

Որ կանաչի ամեն գարնան

Չմրուխտ-զմրուխտ կը շողշողայ

Յետոյ ոսկի, հուր կը զգենու

Աշնան գոյներ տխրադալուկ

Կ'երթայ հողին միաձուլուելու....

Դժուար է գիտ հասկնալը

Իմ մէջ կ'ապրի գոյի խորհուրդն

Մերթ խաղաղ զերթ երկնի կապոյտն

Մերթ շանթ ու կայծ ահագնացունց....

Մերթ հանդարտիկ ծով կապուտակ

Երկնին ժպտող, փիրուզափայլ

Մերթ փոթորկոտ ալեաց շառաչ

Որ հուր ժայթքէ ահագնացայտ....

Հիւլէիս մէջ կայ խտացեալ

Տիեզերք մ'անհուն ու բարդիբարդ



Անդրադարձում հրաշանման

Երանգներու բիրածաւալ...Ե.Գ.

.....

Դուն պիտի երթաս սեփական ճամբէդ

Ա՛գգ իմ տանջահար, ա՛գգ իմ վշտակէզ

Իյնալ-ելլելով պիտ' ճամբադ հարթես

Լոյս հեռուներուն աչքդ դուն յառես...

Ճակատդ միշտ բաց, հոգիով անվեհեր

Խիղճիդ խորանին լոկ պիտի ծնկես

Խոստովանանքդ այնտեղ կատարես

Լուսոյ խորանին քու արարչաստեղծ...

Ցաւէդ պիտ' այրիս, մորմոքիս հրակէզ

Բայց տառապանքէդ լոյս պիտի քաղես

Այսպէս ես ապրեր միշտ դար ու դարեր

Լոյս ես արարեր ոգիով աներեր...

Դժուար է ուղիդ, ես այդ լաւ գիտեմ

Բայց այդ ընթացքն է լոկ երջանկաբեր

Որ տանի լոյսին ճաճանչահեղեղ

Ընդմէջ փուշերուն որ ոտքդ ճանկռես...

Ճակատագիրդ այդ մագլցո՛ւմն է

Վերընթաց ուղին սէզ լեռների ի վեր

Որք գագաթներն երկինք կը խրեն

Ըմպելու ճաճանչն արեւին հրէ...



Ու թէ սայթաքիս դուն ուղեմուր
Ճամբադ լուսողող քեզ պիտի կանչէ
Քանզի ուխտեալն ես դուն հաւատաւոր
Լոյսին անստուեր ու ճաճանչագեղ...Ե.Գ.

.....

Հիմա արդէն ուրի՛շ եմ ես
Չեմ հաւատար պարապ գովքին
Ասոր-անոր հաճոյ խօսքին
Ա՛լ միամիտ չեմ առաջուն պէս:

Կարկուտ տեղաց իմ բաց գլխուն
Քանի հարուած ես ստացայ
Արիւնեցաւ սիրտս փխրուն
Տառապանքես ես սորվեցայ....

Սիրտս ա՛լ չի խայտար դիւրաւ
Շոյող խօսքին ականջ չի տար
Չեմ գիտեր բայց՝ կորո՞ւստ է սա
Թե՛ գանձ անգին իմաստութեան....Ե.Գ.

.....

Գիտեմ շատեր միշտ անտարբեր
Պիտի նային երկնած տողիս
Նոյնիսկ գուցէ արհամարհեն
Ճիգս վատնած մէն մի բառիս...

-Ո՛վ պիտ' կարդայ, ջանքդ է ի զուր
Հայ գի՞րք կարդալ այս օրերուն
Գնա՛ր գործիդ, նետէ աղբին



Կամ դուն կարդա՛, ուրախացի՛ր...

Հոգիս շուարուն կը մտածէ

Կ'արժէ՞ տպել գիրս մշակած

Թէ՞ ան նիրհէ եթերին մէջ

Կամ թռիչք առնէ հողմահալած...

Բայց թէ գիրքի զայն վերածեմ

Գուցէ օր մը երանաւետ


Գայ պատանի մը գանգրահեր

Բաժակ մը լոյս ըմպէ ատկէ...Ե.Գ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԾՆՆԴԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻՆ

ԵՒ ՄԱՀՈՒԱՆ 23-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ (1932-1994)



ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԵՒ ԻՐ ԱՊՐԱԾ ՈՒ ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐԸ

Գրեց՝ ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ

Անըմբռնելի միաճուլում մը մարդկային ներանձնական ապրումներու, սերերու եւ կիրքերու: Առաւել՝ բարոյահոգեբանական խառնուածքի ինքնահակասութիւններով լի արուեստագետ գրող մը, որ շատ հեշտօրէն իր ներքնախօսութիւնները կը վերածէր գրական էջերու, եւ իբրեւ քննախոյզ-արձակագիր՝ մեր ազգային-հասարակական բարդ իրավիճակներուն հանգուցալուծումները կը կատարէր ամենայն ճարտարութեամբ: Իր ստեղծագործական ամբողջ գրականութիւնը իր կեանքին «ապրած ու չապրած տարիներ»-ուն արձանագրութիւնն էր եղած: Խառնուածքով բանաստեղծ էր, —1958-ին հրատարակած էր իր չափածոյ նախախայրիքը՝ «Բալլադ մարդու մասին»—: Ասպարեզ էր ընտրած լրագրութիւնն ու հրապարակագրութիւնը, ձեռնհասօրէն վարած էր խմբագրի պաշտօններ, —բարձրակետը՝ «Գարուն» ամսագիրն ու «Երկիր Նայիրի» շաբաթաթերթը—: Իսկ ի վերուստ շնորհեալ արձակագիրն ու վիպագիրը վերջին երեսնամեակին իրեն ապահոված էր ամուր պատուանդան մը խորհրդահայ գրականութեան մէջ: Արդարեւ, 1960-ական թուականներուն, հայրենական գեղարուեստական արձակը կը յատկանշուէր թարմ շունչովը այն շքեղ աստղաբոյլին, որուն երիտասարդ անդամները կերտեցին հայրենի գրականութեան արդիաշունչ երկերը: Վարդգէս Պետրոսեան (իբրեւ «Գարուն» ամսագրի հիմնադիր-խմբագիր) եւ իր սերնդակից ու գաղափարակից տղաքը, ինչպէս Զրանդ Մաթեոսեան, Պերճ Զէյթունցեան, Սուշեղ Գալշոյեան, Զօրայր Խալափեան, Կարէն Սիմոնեան, Գեորգ Արշակեան եւ ուրիշներ, կանգնեցան արժանաւոր դիրքերու վրայ իրենց հրատարակած վեպ-վիպակներով, պատմուածքներով ու խոհափիպային էսսէներով (Էսքիզներ պիտի կոչէր զանոնք Վարդգէս Պետրոսեան) որոնք կու գային արտասանելու իրենց նոր խօսքը, հայրենաշունչ եւ արդիական մօտեցումներով: 1960-ականներուն խորհրդահայ գեղարուեստական արձակը իրագործեց անկիւնադարձային ուստում մը՝ խորքով ու ձեւով: Խորքին մէջ՝ հարկ է գետնել զայն համազգային ու պետական մակարդակով նշումին մէջ Զայոց ցեղասպանութեան 50-ամեակին, հայրենի երիտասարդութեան առողջ ընդվզումը եւ պատասխանատու դիրքերու վրայ գտնուող քաղաքական ղեկավարներու փոխ-ըմբռնողութիւնը: Ապա, արեւելահայերէն լեզուի ուղղափառ կիրարկումը քայլ առ քայլ գնահատելի աճ մը արձանագրեց: Իրօք. փոփոխուող ժամանակները իրենց դրական ազդեցութիւնը կը դրոշմէին գրականութեան ու մշակոյթի բոլոր մարզերէն, ու յատկապէս խորհրդահայ բանաստեղծութեան բնագաւառէն ներս: Ահաւասիկ այս ժամանակահատուածին հարազատ ծնունդը եղաւ Վարդգէս Պետրոսեանի



«Հայկական Եսթիզներ»-ու երկհատոր գրական ժառանգութիւնը: Առաջին գիրքը լոյս էր տեսած 1969-ին (Հայաստան հրտ., Երեւան): Հայրենիքին ու Սփիւռքին կենսական մտահոգութիւնները այս փոքրիկ հատորին մէջ միաձուլուել էին իրարու մէջ: Եղած մէկ հոգեկերտուածք: Զիչ մը բանաստեղծութիւն — «յոյգ-ապրում-զգացողութիւն» — կը գտնենք տարածուած այս զոյգ հատորներու բոլոր էջերուն՝ իբրեւ շունչ ու ոգի, գեղարուեստական պատկեր, ու վաւերաթղթային ճշգրտութեամբ պատում ու պատմութիւն: Վ. Պետրոսեանի ներաշխարհին ծնուցիչն էր ու կը մնար Գ. Նարեկացին՝ որուն հրեղէն բառերու աւազանին մէջ մկրտուել էր ան իր ամբողջ զգայնութեամբ ու իմացական խորքով: Իրեն համար ընտրել էր Նաեւ աւագ եղբայր հոգի մը, նահատակի լուսապսակով շողշողուն «Պատկեր ու կենդանագիր»-ն անոր, որ բոլորիս ծանօթ Չարենցն էր: Անով կը շնչէր եւ անով կ'ահագնանար իր ոգեղէն ամբողջը եւ ինք եւս այդ պահուն կ'ուզէր նմանիլ անոր՝ որուն պէս ինք ալ «փոքրամարմին» թէւ, բայց անկասելի ջրվեժ մըն էր ամբարած իր ներաշխարհին մէջ: Կլանուած անոր «Մահուան տեսիլքով, որուն պղտոր, կատաղած հեղեղը քշում էր իր ժողովրդի պատմութեան դագաղը: Դագա՛ղը... Եւ առաջին տողը ծնուեց իբրեւ նորածին մանկան ճիչ»- «Թող ոչ մի զոհ չպահանջուի ինձնից բացի, Ուրիշ ոտքեր կախաղանին թող մօտ չգան...»: Չարենցն էր ան, եւ հայ ժողովուրդն ամբողջ, փառքովս իր հեռաւոր անցեալին ու դժիւեմ ճակատագրովը 1894-1923 երեսնամեայ եակին: Եւ ինք՝ անոր սիրոյն, կենդանի պատարագ ու նահատակ: Ահաւասիկ, այս հոգեվիճակը ամենօրեայ ապրումի վերածող արծակագիրը եղաւ Վարդգէս Պետրոսեան: «Հայկական Եսթիզներ»-ը գրուեցան հոգեկան այս պայմաններու տակ: Հարց մի՛ տաք իրեն, թէ գրական ո՞ր մէկ սեռին կը պատկանին անոնք: Իւրաքանչիւր պատում՝ իսկական ապրում մըն է ինքն իր մէջ: Մասնիկ մը այն հսկայածաւալ խճանկարէն զոր Շահնուր իրաւամբ կոչէր էր «Պատկերագարդ Պատմութիւն Հայոց»: Եկեք, այս մեծապատառ որմնանկարին սա կետին վրայ կեդրոնացնենք մեր լուսարձակին շողքը, այնտեղ՝ ուր հայրենի արծակագիրը իր նշանաւոր «Կռիւ»-ը կը մղէր իր ժողովուրդին հետ: Խօսքը կու տանք իրեն.

«Օ՛, իմ ժողովուրդ, դու հաւաքական Նարեկացի, գուցէ արդա՛ր էր, որ դու, հենց եւ միայն դու պատասխան տայիր աշխարհի մեծ ու փոքր մեղքերի համար եւ հենց քո “ողբաճայն աղաղակը” չսէր աշխարհը, թեպէտ դու աղաղակել ես հենց նրա բառերով: Օ՛, իմ ժողովուրդ, դու հանճարեղ ձախողակ: Դու, որ սքանչելի բանաստեղծներ ունեցար, բայց ոչ մի դիւանագետ եւ պետական մարդ (եթէ ունեցար՝ ուրիշներին ծառայեցին), դու, որ սրբացրիր բոլորին, որ ուզեցան, ճգնեցին քեզ ծառայել, քեզ օգնել՝ առասպելի Արտաւազդ արքայորդուց մինչեւ... Ես չգիտեմ՝ այսօր, վաղը դու ո՞ւմ ես խաչելու... Ես կռիւ ունեմ ժողովրդիս հետ, իսկ դու ասում ես ինձ հազարամեայ քո հեռուից.

Մի կեղեքիր ինձ, յօշոտուած եմ, տես,

Արդէն ջարդուածիս էլ մի՛ ջախջախիր,

Էլ մի՛ բզկտիր, մորմոքուած եմ ես,

Մթնածիս նորից մի կուրացրու...

Սիրեցի՞ր դու ոեւէ մէկին, ոեւէ մէկը սիրե՞ց քեզ... Իսկ սիրե՞լ ենք մենք ոեւէ մէկին, ոեւէ մէկը սիրե՞լ է մեզ...»: Մէջբերուած այս տողերէն կ'առանձնացնեմ նախ Չարենցին պատկանող նշանաւոր երկտողեակը (...Ուրիշ ոտքեր կախաղանին թող մօտ չգան...), ապա՝ Վարդգէսին ուղեղային մորմոքը բացայայտող տողը. «Ես չգիտեմ՝ այսօր, վաղը դու ո՞ւմ ես խաչելու...»:



Անհաւատալի է, բայց իրաւ: Ինչպէ՛ս պիտի կռահէր թէ, անծանօթ օր մը՝ խաչուելու հերթը պիտի գար Նաեւ իրեն, Նախ՝ զինք «ողջակիզելով» իր իսկ «կրակէ շապիկ»-ին մէջ, ապա՝ 1994 Ապրիլ 15-ին, իր հողանկիւն շինուածքը դարձնելով զոհ հայաստան փամփուշտի, զործադրուած խորհրդաւոր պայմաններու տակ, որ պիտի վայելէր «պաշտպանութիւնը» անպատժելիութեան մենաշնորհի մը ծխածածկոյթին: Ահա թէ ինչո՛ւ իրեն զլացուեցաւ անձամբ Ներկայ գտնուիլ իր 65-էն մինչեւ այսօր 85-ամեակի հերթական յոբելեաններուն: Որովհետեւ, ոչ եւս է ան, իբրեւ անհատ: Իսկ «Ապրած եւ չապրած տարիներ» ասոյթը այլեւս դադրած է իր հանրածանօթ վիպականերէն մէկուն խորագիրը համարուելէ, ու վերադարձած իր հեղինակին: Ողբերգութիւնը սակայն, իր «չապրած տարիներ»-ուն մէջ կը գտնուի: Իսկ զիրքերուն ճակատագիրը... Նոյնքան դաժան իրականութեան մը դուռը կը բախէ մինչեւ այսօր եւ արդարութիւն կը պահանջէ իր ընթերցողէն: Իր «ապրած տարիներ»-ուն բեղուն հոսքը գրական ստեղծագործութեան վերածող գրագետն էր եղած ան: Իր իսկ բանածելումով, զոր կը գտնենք «Հայկական Եսթիզներ»-ու Բ. շարքի վերջերգին, կը գրէ. «Այս գիրքը դու ես թելադրում, իմ երկիր, եւ ես պարզ մի գրամբքենայ եմ, ձայնագրող ժապաւեն: Ուրեմն, նորից ճանապարհ: Եւ նորից քեզ, Հայաստան»: Արդի հայ գրականութեան մերօրեայ ուսանողը, երբ կը ծանօթանայ Վ. Պետրոսեանի ստեղծագործական բեղուն վաստակին, անպայմանօրէն պիտի մտապահէ Նաեւ յաջորդաբար լոյս ընծայուած իր վէպերն ու վիպակաները, ինչպէս՝ «Վերջին ուսուցիչը», «Մենաւոր ընկուզեմին», «Ապրած եւ չապրած տարիներ», «Դեղատուն Անի» եւ այլ երկեր, որուն Նշանաւորագոյնը եղաւ «Կրակէ շապիկ» եռամաս ընդարձակ վէպը (1986), հարուստ՝ իր Նկարագրային խճճանքներով ու քննադատութիւններով, ուղղուած սփիւռքահայ մեր իրականութեան ծնունդը եղող երեւոյթներուն: Արդարեւ, հայրենիքի մէջ ղեկավար դիրքերուն վրայ գտնուող շատ քիչ անձեր կային, որոնք լաւապէս գիտակ էին Հայութեան սփիւռքեան կառոյցին ու հոգեբանութեան: Վարդգէս այդ փոքր խումբին կը պատկանէր ու ճիշդ այդ պատճառով ինքզինքին թոյլ պիտի չտար յորդահոս ընթացքը իր սլաքներուն: Ներքին գրաքննիչը գրագետին, պարտուած դուրս կու գար միտքերու այս անհաւասար բախումէն, երկբեւեռ վերիվայրումներէն: Ու հակառակ իր այս «մարդկային թուլութեան», տարագիր Սփիւռքի մեր կեանքին, հոգեբանութեան, երագին ու տենչերուն, եւ ընկերային գաղափարախօսութեան նուիրուած «Կրակէ շապիկ»-ը կոթողային վէպ մը ըլլալէ չի դադիր, ան՝ որ Նախապէս իր ամսագրային առաջին տարբերակով կոչուած էր «Դատարկ աթոռներ Ծննդեան տօնին» (տե՛ս. «Սովետական գրականութիւն» ամսագրի 1986-ի համարները), որուն վերամշակուած ու փոփոխութիւններու ենթարկուած տարբերակն էր Նոյն տարին իսկ 600 էջի սահմանի մէջ լոյս տեսած ստուարածաւալ եռամաս այս հատորը, որ անվերջ մենախօսութիւնն էր հեղինակին, իր դրական թէ բացասական կերպարներով, բանավէճերով ու եզրայանգումներով: Ինք Ներկայ է իր բոլոր «հերոս»-ներուն մէջ, ինքն է բեմադիրն ու բեմայարդարը, ի՛ր փափաքով է, որ անոնք կը վիճին ու կը հաշտուին, կը սիրեն ու կը սիրահարին, կ'երգեն կամ կը մերժեն երգել («Քելէ լաօ, քելէ Երթանք մըր Երկիր...»): Կարճ՝ այս վէպը, հեղինակին գիտակցական կեանքի ու գրական կենսափորձի ամբողջ ճանապարհին հանրագումարն է, իր ազգային գաղափարախօսութեան եւ հաւատքի քննութիւնն է, իր կեանքին վէպն է: Գրած է 1983-86 տարիներուն: Սակայն, գրելէ առաջ, ան ապրած է իր վէպը անձնապէս: Հոն արտայայտած գաղափարներուն մէնք հանդիպած ենք ոչ միայն իր առօրեայ գրոյցներուն ընթացքին, այլեւ՝ «Հայկական Եսթիզներ»-ու մէջ եւ իր հրապարակային ելոյթներու ընթացքին: Պատահած է Նաեւ որ կրկնութիւններու տժգունութիւնը տկարացնէ թափը իր թռիչքին եւ ազդեցութիւնը՝ խօսքին: 1986-ին իր զոյգ տարբերակներով, Վ. Պետրոսեանի այս եզակի գործը, Նոյն եւ յաջորդ տարիներուն իսկ



հայրենի եւ սփիւռքահայ գրական մամուլի էջերուն տուաւ առատ նիւթ թեր ու դեմ կարծիքներու շատրուանումով (տեսնել նաեւ տոյն տողերը ստորագրողին զոյգ յօդուածները՝ «Չարթօնք»-ի 6 Մայիս եւ 21 Յոկտեմբեր 1987-ի համարներուն մէջ)։ Արդարեւ, 1986-ին իր աւարտին հասած այս վէպը, իսկական դիմագիծը կու տար իր ժամանակին ու մարդերուն։ Մինչ հեղինակը կը սարքեր անհեթեթ բեմադրութիւններ, որոնք կը վնասէին իր իսկ ազգային-ընկերային վարքագիծին։ Այդ յօդուածին մէջ, կը մատնանշէինք հետեւեալ կէտերը.

- Զայ ժողովուրդին ճակատագրական աշխարհագրամասը։
- Եղեռնը՝ իր արհաւիրքով։
- Զոդային մեր անժամանցելի դատը։
- Զայ եւ թուրք մերձեցումներ,
- Անհաշտ պայքար, ներո՞ւմ, մոռացո՞ւմ, ուրացո՞ւմ։
- Զայրենիքի ներկայ իրականութիւնը։
- Սփիւռքը այնպէս՝ ինչպէս որ է։
- Զեռանկարներ եւ եզրակացութիւն։

Մեկնելով մեր այս հարցադրումներէն, կը հաստատենք, թէ պետք է ընդունինք, որ Վարդգէս Պետրոսեան իր ժամանակի քաղաքական մտածողութեան մէջ (ընկերակցութեամբ իր պատանեկան շրջանի դպրոցակից՝ պետական բարձրագոյն գործիչ ու իրեն ճակատագրակից Կարէն Դեմիրճեանի), հանդիսացաւ բացառիկ երեւոյթ մը։ Մտքի մաքառումներով գրեց իր տասնեակ մը վէպերը։ Նոյն տաղանդով ու կիրքով՝ ստանձնեց ու վարեց բարձրագոյն պաշտօններ։ Զասաւ արագածա- նման կատարներուն եւ այդ բարձունքէն երբ աչքերը յառեց անոնց ստորոտին, տեսաւ ու հաստատեց գոյութիւնը կեանքի առեղծուածային վիճերուն, որոնց մէջ օր մը թաւալագլոր պիտի գտներ տարաբախտ գրագէտի իր վախճանը։ Իսկ այսօր, սիրելի ընթերցող, երբ ներկայ ժամանակը կը յուշէ մեզի իր կեանքին 85-ամեակը, եւ ինք կը բացակայի ֆիզիքապէս մեր տեսադաշտէն ու մեր գրական հանդիպումներէն, մեր ընդվզումը կը յայտնենք հետեւեալ բառերով.- Մարդ արարածը կը ծնի ու կ'ապրի իբրեւ բնութեան մէկ պարգեւը։ Անոր կեանքի վախճանին տնօրինումը զոհ պետք չէ դառնայ մարդասպանական եւ ահաբեկչական արարքներու։ Յոռեգոյնը դատական վճիռներուն՝ ցկեանս բանտարկութիւնն է։ Մանաւանդ, երբ հայանուն մարդերու եղբայրասպան գնդակներու զոհ կ'երթան Վարդգէսէն մինչեւ Կարէն, Վազգէն ու Վահէ։ Զայ մարդեր, վերանկախացած մեր մայր հայրենիքի հողին վրայ ... դժբախտաբար կը վայելեն պաշտպանութիւնը անձեռնմխելիութեան եւ անպատժելիութեան։ Յանուն պատմական ճշմարտութեան, վերջին 25 տարիներուն հայրենի հողին յանձնուած զոհերուն ու դահիճներուն ցուցակագրումը կը պահանջենք, առ ի դատապարտութիւն արարքին եւ կանխազգուշացում՝ անոնց կրկնութիւններուն։ Արդա՞ր է մեր պահանջը։ Ամէն ոք՝ թող հարց տայ իր խղճմտանքին։ Ա. Ս.

«Ուղղագրական-Ուղղախօսական Տերմինաբանական Բառարան»ի Օտար Բառերու Շարանը

ՀԱՅԵՐԷՆԸ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵՆՔ

ՏՈՔԹ. ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ*



«Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնական լեզուն գրական հայերեն է» սկզբունքը ամրագրուած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրութեան մէջ, որուն վրայ կ'երդնուին նախագահները, իսկ քաղաքացիները պետք է զայն ընդունին որպէս օրէնք ու յարգեն այդ օրէնքը:

Ինչպէս ըսած էի նախորդ յօդուածներուս մէջ, հարց կը ծագի սակայն, երբ պետութիւնը չի յարգեր այդ օրէնքը ու չի սահմաներ, թէ ի՞նչ կը նշանակէ «գրական հայերեն» եզրի

իմաստը: Այսօր Հայաստանի մէջ չունինք «գրական հայերեն»ի բառապաշարին սահմանուած բառացանկ: Լաւագոյն պարագային նկատի պիտի ունենանք «Ուղղագրական-ուղղախօսական տերմինաբանական (եզրաբանական) բառարան»ը՝ որպէս «գրական հայերեն»ի բառացանկի մատեան: Արդեօք այդ ճի՞շդ է, հակառակ որ բառարանին հեղինակը 1973ին տպուած իր յառաջաբանին մէջ կը յաւակնի գրել.

«Հայերէն ուղղագրական-ուղղախօսական տերմինաբանական բառարանը պարունակում է ժամանակակից գրական հայերէն լեզուի բառապաշարը (աւելի քան 152,000 բառ): Սակայն,



ունենալով բառերի ուղղագրութիւնն ու արտասանութիւնը ներկայացնող տեղեկատու նշանակութիւն եւ ոչ թէ հայոց լեզուի բառագործածութիւնը նորմաւորող արժէք՝ բառարանը, բացի գրական հայերէնի գայն գործածութեան բառերից, պարունակում է նաեւ հնացած ու բարբառային որոշ թուով բառեր, որոնց շատ յաճախ հանդիպում ենք ոչ վաղ անցեալի գրականութեան մէջ, ինչպէս եւ՝ գիտական եւ գիտատեխնիկական գրականութեան մէջ լայն գործածութիւն ունեցող մասնագիտական տերմիններ»...

Ուստի, այս բառարանը կը պարունակէ գրական հայերէնի բառապաշարը... ոչ մէկ խօսք՝ օտարաբանութեան կամ օտար բառարմատներով «շինծու» բառերու յօրինման ու բառարանին 15-20 տոկոս էջերը այդ բառերով լեցնելու իրողութեան մասին:

Եթէ ազատ ու անկախ Հայաստանի գրական հայերէնի բառապաշարը այս բառարանին մէջ տեղադրուած է, ապա ջանանք աստիճանաբար ուսումնասիրել՝ իսկապէս հայերէն եւ անոնք, թէ օտար բառեր: Ուշագրաւ են երկու հրատարակութիւններ Հայաստանի մէջ, 2004 եւ 2014 թուականներուն. անոնց վերնագիրները կը հաստատեն, թէ Հայաստանի մէջ գործածուած պաշտօնական եւ ոչ պաշտօնական «գրական» եւ խօսակցական լեզուն մաքուր հայերէն բառապաշար չեն պարունակեր:

Խօսինք փաստերով.

1. Հայաստանի նախարարութիւններուն 7ին անունները օտար բառեր են.

ա. սոցիալական, բ. սպորտ, գ. Էներկետիկա, դ. ֆինանս, ե. Էկոնոմիկա, զ. տուրիզմ, Է. տրանսպորտ:

2. Պետական կառոյցներու մէջ գործածուած բառեր՝ դիբլոմա, լիցենզիա, ֆակուլտետ, դեգան, ժուռնալիստական, եւ այլն:

3. Բժշկական, շարժապատկերի, երաժշտութեան, տեղեկատուութեան, արհեստագիտական եւ այլ մարզերու մէջ գործածուած օտար բառերը՝ բազտերիա, ուռլոգիա, ռեժիսոր, օպերա, կոնսերվատորիա, եւ այլն:

Ներքեւը նշուած բառարանները հրատարակուած են այս հարցերը սրբագրելու...

1. «Օտար բառերի բացատրական բառարան», հեղինակներ՝ Ալեքսանդր Սարգսեան եւ Աշոտ Հայրապետեան, 8000 բառ:

2. «Հայերէնում գործածուող օտար բառերի բառարան», շուրջ 3400 բառ:

Այսինքն, այս մարդիկ ժամանակ յատկացուցած են եւ քրտինք թափած, որպէսզի հայերէնի մէջ գործածուած օտար բառերը բացատրեն եւ անոնց համապատասխան եւ համարժէք հայերէն բառերը մատնանշեն... Եկուր ու մի՛ խենթենար...

Պարզաբանենք, թէ ի՞նչ է պատահածը:

Սահմանադրութիւնը կ'ըսէ՝ (մաքուր) գրական հայերէնով պէտք է հաղորդակցիլ. պետութիւնն ու այլ կառոյցներ (տպագիր մամուլ, հեռատեսիլ, համացանց, Դիմատետր, եւ այլն) այդ օրէնքը չեն յարգեր եւ օտար բառեր կը գործածեն՝ հայերէնի փոխարէն. բառարաններ կը պատրաստեն, որ օտար բառերուն փոխարէն հայերէն բառեր գործածեն...



Ո՛ր է պետութիւնը, ո՛ր է Սահմանադրութեան օրէնքները յարգել տուողը, ո՛ր է կրթութեան ու գիտութեան նախարարութիւնը, ո՛ր է նախագահը, վարչապետն ու խորհրդարանը...

Հայոց լեզուն անարգուած է, ոտնահարուած եւ անպաշտպան...: Ոմանք պիտի ըսեն՝ հայերէնը մաքուր պահելուն մէջ դրամ չկայ, որ բոլորը այդ գործով զբաղին:

Վերադառնանք փրոֆ. Բարսեղեանի կոթողային բայց խախուլ «Ուղղագրական-ուղղախօսական տերմինաբանական բառարան»ին, «գրական հայերէն»ի բառացանկին: Բառարանին մէջ տեղադրուած «Կ-Ֆ» սկզբնատառով բառերը վերլուծելով՝ ակներեւ կը դառնայ, թէ այս բառարանը գրական հայերէնէն աւելի՝ կը պարունակէ բազմահազարօտար եւ օտար բառարմատներով բառեր, որոնք պետք է մաքրագտուին ու մաղուին: Մնացած գրական հայերէն բառերու ցանկը պետք է հրատարակուի՝ աւելցուած նորակերտ բառերով, իբրեւ համահայկական ամբողջական հայերէն գրական բառացանկ, ի հարկէ՝ դասական՝ Մեսրոպեան ուղղագրութեամբ, եւ վերջ դրուի օտար բառերու ու օտար բառարմատներով բառերու գործածութեան:


Յոյս ունինք, որ վերջերս պաշտօնի անցած գիտութեան եւ կրթութեան նախարարը իր հեռատես եւ ուշիմ խառնուածքով կ'աջակցի նման որոշումի մը:

Կ'անկկալենք նաեւ, որ Հայաստանի պետութիւնը պատասխանատուութիւնը ստանձնէ այս ազգային լուրջ գործունեութեան, որուն սկսնական նախաքայլերը պիտի առնէ «Մեսրոպեան ուխտ լեզուապահպանութեան միութիւն»ը:

*Տոքթ. Յակոբ Այնթապեան անդամ է «Մեսրոպեան ուխտ լեզուապահպանութեան միութեան»:

Մշակոյթ, թէ՛ հակամշակոյթ

Դանիէլ Երաժիշտ



Այժմ մշակոյթի և մասնաւորապէս արուեստի մասին խորհելիս յաճախ տեսիլւում է բանաստեղծի պատկերած այն ծառը, որի սաղարթում հաւքերը բոյն են շինում ու երգում, մինչդեռ ծառը տակից սղոցում են...

Մշակոյթի կենաց ծառը փորձում են կտրել առաւել «բարձր հովանաւորութեամբ»: Ովքե՛ր են այդ վնասատուները, զաւթիչները, կեղեքիչները, բռնակալները:

Անշուշտ՝ Նոյն խմորի մարդիկ:

Իմաստունները մարդկանց բաժանում են երկու տեսակի՝ աշխատասեր, սթափ արարողների և սպառողների (սպառնացողների), աւերողների: Ծոյլերը, թոյլերը, ապաշնորհները, վախենալով սովից, մահից, վերածւում են բռնակալների: Ոմանք էլ, համախմբուելով իրենց նմանների հետ, վերածւում են հորդանների և զանազան խմբաւորումների: Դրանք են, որ մշակոյթը, Նոյնիսկ կրօնը օգտագործում են որպէս իրենց յանցանքները քողարկելու միջոց:

Մի դասական օրինակ. 637 թուին Զադիսիայի «սրբազան պատերազմից» յետոյ, արաբ զօրավարները որոշել էին աւարից մեծ բաժին տալ Նրան, ով կը կարողանար Ղուրանից գէթ մէկ սուրահ յիշել: Եւ այդքան զինուորների մէջ չգտնուեց և ոչ մէկը...



Մշակոյթը, հոգեւորը անհատին և ժողովրդին վեհացնող ինքնութիւնն է, տարբերանշանը, դէպի երկինք տանող «հրթիռն» է:

Եւ հենց այդ պատճառով է, որ մշակոյթի վերացումը յանգեցնում է այն կրողների վախճանին: Եւ հակառակը՝ մշակոյթը կրողների կամ այդ մշակոյթի պահանջարկի ոչնչացումը, բնականաբար, բերում է մշակոյթի անկման:

Պատմութեան ընթացքում հայ ժողովրդի հանդէպ բազմիցս կիրառուել է թէ՛ մէկը, թէ՛ միւսը:

Կայ մշակոյթի տապալման մէկ այլ միջոց եւս:

Դա մշակոյթի քաղաքականացումն է, այն կցորդ դարձնելը, առեւտրայնացումը, ինչպէս նաև տուեալ ժողովրդին իշխելու, տարրալուծելու նպատակով խորթ մշակոյթի ներմուծումը (ի հաշիւ սեփականի): Եւ դա յաճախ իրագործուում է տուեալ ժողովրդին «լուսաւորելու», «կրթելու» դիմակի տակ, ինչպէս տեղի էր ունենում կոմունիստների օրօք:

Այնուամենայնիւ ոչնչացման ամենակարճ ճանապարհը մշակութային «ինքնասպանութիւնն է», այսինքն՝ տուեալ ժողովրդի ներսից թիկունքին ուղղուած հարուածները, որոնք հասցնում են դաւաճանները: Դա տեղի է ունենում, երբ մշակոյթն օգտագործում են, շահարկում հարստանալու, տնտեսական պայքարի, եսապաշտական նկրտումների իրականացման ընթացքում: Ցաւօք, նման բան այսօր տեղի է ունենում նաեւ աշխարհի ամենամշակութային երկրներից մէկում՝ Ռուսաստանում:

Կեանքի ծայրայեղ նիւթականացման, հարուստների և աղքատների աննախադէպ բեւեռացման, արտագաղթի պայմաններում, անշուշտ, խաթարւում է մշակոյթի բուն առաքելութիւնը, դիմագիծը: Ճիշտ էր Լեոնիդ Անդրեւը, երբ ասում էր. «Որքան իրերը թանկանում են, այնքան մարդն էժանանում է»: Նիւթականի և հոգեւորի իւրօրինակ կապի մասին «Լիտերատուրնայա գազետա» թերթը ժամանակին կէտլուրջ-կէսկատակ գրել է. «Պահպանեցէք անտառը՝ մեր գրականութեան ապագան»...

Արկաղի Ռայկինը ծաղրում էր այն օգտապաշտներին, ովքեր, օրինակ, բալետից որեւէ օգուտ քաղելու համար պահանջում էին պարուհիների ոտքերին յարմարեցնել փոքրիկ սարքեր, որպէսզի գոնէ ելեկտրական հոսանք ստանան... Մեզանում նիւթական բարիքների թալանի կողքին տեղի է ունեցել նաեւ մշակութային արժէքների կողոպուտ:

«Արդեօք ովքե՛ր են»... և ինչպե՛ս են թալանում:

Դրանք մշակոյթի ոլորտում պատահականօրէն յայտնուած կամ յատուկ սողոսկած ճարպիկ մարդիկ են, որոնք մեզանում և արտասահմանում որպէս ազգային ներկայացնում են միջակ արուեստը և արուեստագետին, պատճեններ՝ աղճատելով Ռուսաստանի մասին հասարակական կարծիքը:

Մի առիթով մի կոմպոզիտոր այսպէս է բնութագրել միւսի արուեստը. «Ռայկական է, ազգային է, բայց միջակ է»: Ստիպուած եղայ միջամտել. «Եթէ միջակ է, ուրեմն ազգային չէ»:

Չամատարած թալանը գայթակղիչ է և վարակիչ:

Չայնրիխ Չայնէի «Առաքինի շունը» առակի Բրուտոս անունով շունը ամէն առաւօտ խանութից միւս էր գնում և անկորուստ հասցնում տիրոջը: Մի օր բակի շները որոշում են



իրենց ցեղի դաւաճանին պատժել՝ յարձակուում և խժռում են միսը: Տեսնելով, որ միսը վերջանում է, մի պատահ էլ ինքն է ճանկում. «Դո՛ւ էլ, իմ Բրուտոս, դո՛ւ էլ ես լափում...»:

Ֆրիդրիխ Նիցշեն ասում էր. «Երբ գործը հասնում է իսկական իմացութեանը, մենք երկնչում ենք»: Յիրաւի, արուեստը, գիտութիւնը պահանջում են երկիւղածութիւն, հոգածութիւն: Նույնիսկ «հանճարեղ» կեղծարար իտալացի Ալջեօ Դոսսետեան ափսոսալ գիտէր: 20-րդ դարի մշակութային ամենաաղմկայարոյց միջադէպի այդ հերոսի կերտած «անտիկ» քանդակների կեղծիքը կարողացան բացայայտել միայն մի բանի շնորհիւ: Բանն այն է, որ հնութեան տպաւորութիւն ստեղծելու նպատակով նա մուրճով, բայց ափսոսանքով և զգոյշ կոտորում էր Նորաստեղծ քանդակների որոշ մասերը: Եւ հենց դա էլ մատնեց նրան:

Իսկ մերօրեայ կեղծարարները աւերում են բնօրինակներն իսկ: Այդպէս են վարւում մեր հարեւանները հայկական միջնադարեան յուշարձանների հետ, այդպէս են վարւում և մերոնք՝ Նարեկացու տաղերի, Կոմիտասի երգերի և այլ արժէքների հետ:

Նման պատեհապաշտները, մշակոյթի «ահաբեկիչները» պարզապէս չեն սիրում, չեն ըմբռնում այդ արժէքների մեծութիւնը:

Ինչպէ՛ս են այդ «տրոյական ձիերը» յայտնուել մշակոյթի ասպարեզում: Մարդիկ, որոնք առանց ցաւ զգալու գործարքի մէջ են մտնում թէ՛ այն և թէ՛ այս աշխարհի «ուժեղների» հետ: Դրանց մի մասը դեռ կոմունիստների ժամանակ «զբաղուել» է արուեստով, միւս մասը Նորաթուխ գործիչներ են: Երկու տեսակն էլ չեն ամաչում իրենց միջակութիւնից, քանի որ հիմա իւրայինները շատացել են:

Տարիներ առաջ մի թերթ վկայում էր, որ եթէ Փարիզի աղբատար մեքենաների վարորդները մէկ-երկու շաբաթ գործադուլ անեն, մայրաքաղաքը կը ծածկուի աղբով: Մեզանում մի քանի տարի «գործադուլի մատնուած կեանքի» հարուածներին տեղի տուած որոշ երաժիշտներ, այսպէս կոչուած արվեստագետներ, հնչիւնային ռեժիսորներ... կամայ թէ ակամայ «հաշուեյարդար» տեսան, «ծախուեցին» և ծախեցին հոգեւոր արժէքները: Ամբողջ Հայաստանը ծածկուեց «աղբով». նկատի ունենք անբարոյ, մատաղ սերնդին այլասերող երգերի ձայնագրութիւնների համաճարակը: Արուեստը վերածուեց արհեստի, արհեստը՝ բիզնեսի, բիզնեսը՝ մշակութային «մարմնավաճառութեան...»: «Բումբերանգի» էֆեկտը գործեց և միւս ասպարեզներում. օրինակ՝ մարզիկներից ոմանք, թողած Օլիմպոսի ուղին, դարձան... թիկնապահներ, ոմանք, տեսնելով իրենցից անհամեմատ թոյլ և ծոյլ «չինովսիկ-կաշառակերների» բարգաւաճումը, սկսեցին իւրովի օգտագործել իրենց ուժը և «շնորհքը»:

Միշտ հպարտացել ենք, թէ Հայաստանի աշխարհագրական դիրքը նպաստաւոր էր հայերի համար ստեղծագործաբար իւրացնելու թէ՛ Արեւմուտքի և թէ՛ Արեւելքի մշակութային նուաճումները: Սակայն այսօր այդ դիրքն էլ չարաշահուեց՝ Հայաստանը հեղեղուել է մի կողմից մահմեդական, խորթ, այն էլ ցածրորակ հակամշակոյթով, միւս կողմից՝ արեւմտեան սանձարձակ, սեքսուալ «չարուեստով», նոր հեթանոսական «բարքերով» և աղանդներով: Այս ամէնը ժողովրդին կտրում է իր ճշմարիտ ակունքներից, խոցելի դարձնում:

Եւ հակառակը, կարող ենք վկայակոչել հայ արուեստի առանձին փայլատակումներ: Սակայն դրանք չեն դառնում համազգային վճռորոշ գործօններ: «Չարուեստի» բիզնեսի ջատագովները, «հոգեորսները», մատաղ սերնդին ապակողմնորոշելով, դարձնում են իրենց «յաճախորդը»՝ ներարկելով արհեստական պահանջարկ, ինչպէս թմրամոլների



պարագայում: Բացի այդ յաճախ, վկայակոչելով յիշեալ փայլատակումները, դրանք օգտագործում են որպէս համատարած անճաշակութիւնը և բարգաւաճման անբարենպաստ պայմանները քողարկելու միջոց:

Խօսքը, ինչպէս և երաժշտական հնչիւնը, մեծ ուժ է, և այսօր այդ երկունսն էլ յայտնուել են աւերիչների ձեռքում: Յիշենք Լև Տոլստոյի «Կրեյցերեան սոնատը» պատմութեան յայտնի դրուագը. «...Չինաստանում երաժշտութիւնը պետական գործ է: Եւ այդպէս էլ պէտք է լինի: Մի՞թէ կարելի է թոյլ տալ, որ ամեն ցանկացող հիպոսոացնի մէկը միւսին կամ շատերին և յետոյ նրանց հետ վարուի ինչպէս կամենայ: Եւ ամենագլխաւորը, որ այդ հիպոսոացնողը լինի առաջին հանդիպած անբարոյական մարդը: Ու այդ ահաւոր միջոցը այդ առաջին հանդիպածի ձեռքը տալ»: Այն էլ այն դէպքում, երբ խօսքը Բեթհովենի հանճարեղ սոնատի մասին է, որը մարդուն մղում է մեծագործութիւնների, իսկ ի՞նչ ասենք մեզ պաշարած փողոցային, գոմիկ, անճաշակ, պիղծ երաժշտութեան մասին, որը յայտնի է, թէ ինչ արատաւոր արարքների է մղում մարդուն, մատաղ սերնդին: Եւ մարդկանց հիպոսոացնելու այդ «պատիւն» ու մենաշնորհը պետութիւնը նուիրել է սրճարանատերերին, կասկածելի ռադիոհեռուստաալիքներին և յատկապէս երթուղային տաքսիների վարորդներին, որոնք էլ իւրովի «կերտում» են մեր ապագան: Նոյն «երաժշտասեր» վարորդները թաւջութեամբ ուղեւոր չեն վերցնում, մինչդեռ այդ նուագարանից է կախուած սիմֆոնիկ և օպերային արուեստի ապագան: Պատահական չէ, որ շատ դպրոցներում նուագել և վերացել են թաւջութակի դասարանները:

Հակամշակոյթի գրոհները ունենում են երկու փուլ. նախ արմատախիլ են անում մշակութային դաշտի դարաւոր ծառերը, այնուհետև այդ դաշտում ցանում չարի սերմեր: Յաճախ այս ամենը արւում է միաժամանակ:

Պատկերացնո՞ւմ էք ինչ կը լինի, եթէ գինանոցների դռները բացեն երեխաների կամ խենթերի առջեւ...

Այժմ մարգարեական են հնչում Կոստան Չարեանի խօսքերը. «...Եթէ վայր իջնենք... մեքենայի մաս կը դառնանք կամ խանութպան»: Խանութպան արդէն դարձել ենք, մնում է խուսափել մտաւորականի միւս մտավախութիւնից, թէ չէ կ'ընկնենք «արդի քաղաքակրթութեան ծխնելոյզի տակ...»:

Ահա արդի քաղաքակրթութիւնն է, որ մշակութաբանները բնորոշում են որպէս «նոր հեթանոսութիւն», «երիտասարդների քաղաքակրթութիւն», որում «սեր» բառը դուրս է մղուել «սեռ»-ով՝ «սեքսով», «սիրել»-ը անուանում են «գբաղուել սիրով»: Այդպէս էլ նրանք վերաբերում են ամեն ինչին՝ «գբաղւում են արուեստով», «գբաղւում կեանքով»:

Քաջ գիտակցելով արուեստի գոյութիւնը և ազգապահպան նշանակութիւնը՝ Կոմիտասն իր կեանքը նուիրել է հայ ժողովրդական երգի գրառմանը, փրկութեանը, ձերբագատել հարեւան ազգերի երգարուեստի ոչ բարերար ազդեցութիւններից:

Այսօր տեղի է ունենում հակառակը. սրբապղծում են նոյն այդ երգերը՝ խառնելով օտարոտի տարրերին: Մի՞թէ թոռը կարող է պապերի դահճի ձեռքը համբուրել... Նման մարդիկ սխալ են հասկացել պատուիրանը: «Սիրի՛ր թշնամուդ», բայց մի՛ պաշտիր, մի՛ ստրկացիր...

Ժամանակին Կոմիտասը յատուկ յօդուածով հանդէս է եկել ընդդէմ Փարիզում տպագրուած «Հաւաքածոյ հայոց ժողովրդական երգերի» ժողովածուի: Այս երգերից միայն մէկն էր



հայկական, այն էլ՝ խառնուած մէկ այլ երգի, միւսի մեղեդին էլ տաճկական էր և այլն: Այս առիթով Կոմիտասը գրել է. «Մեր ազգի ժողովրդական երգերն այնքան բնորոշիչ են, որ չէ կարելի օտար եւ ցեղակից ազգերի հետ խառնել»: Այո, չխառնել նոյնիսկ ցեղակից ազգերին, ուր մնաց թուրքականին, արաբականին, պարսկականին:

Սակայն մենք ապրում ենք հենց խառնուրդների դարում...

Գոնէ ուրիշներից սովորենք սիրել, յարգել մեր Հայաստանը: Վերջերս հոլանդացի նկարիչ Սիթսէ Բակկերը Հայաստանի ազգային պատկերասրահին նուիրել է Օսիպ Մանդելշտամի «Հայաստան» բանաստեղծական շարքի մոտիվներով իր գրաֆիկական աշխատանքները և խոստովանել. «Որքան հեշտ է սիրահարուել Հայաստանին»: Իսկ Մանդելշտամն այնքան էր ներշնչուած Հայաստանով, հայոց մշակոյթով, ժողովրդական երգերով, որ նեղ օրերին, աքսորում յաճախ էր մտաբերում... «Ճախարակ» երգը: Այս անպաճոյճ երգը նա դասում էր Գէօրգի խօսքերով Շուբերտի ստեղծած «Մարգարիտան ճախարակի մօտ» հանճարեղ ռոմանսի և նման երգերի շարքին:

«Սեւան» ակնարկում Մանդելշտամը խոստովանել է. «Մենք արժանի չենք հայերէն լեզուով խօսելու»: Իսկ ի՞նչ ենք անում այսօր մեր աստուածաշունչ լեզուի, երգ ու բանի հետ, ինչպիսի՞ աղաւաղումներ են տեղի ունենում: Որքանո՞վ են դրանք կարեւորում մատաղ սերնդի ձեւաւորման գործում:

Մեծ աղէտ է Հայաստանի համար հասարակութեան մտահոգ և կարող ուժերի, մտաւորականների մասնատուածութիւնը:

Ռուս փիլիսոփայ Լ. Կարսավինը ներդաշնակ հասարակութիւնը բնորոշել է որպէս «սիմֆոնիկ անձ». ահա այդ բարձրակարգ անձը չկայ մեզանում: Ինչի՞ կը նմանուի այն արտադրութիւնը, եթէ մէկը արտադրի մետաղ, միւսը՝ ցեմենտ, երրորդը՝ ապակի, և դրանք չմիաւորուեն: Ի հետեւանք մի տունը կը լինի միայն մետաղից, միւսը՝ ցեմենտից, երրորդը՝ «թղթից» և այլն:

Նոյնը տեղի է ունենում նաև մշակոյթի և այլ ասպարեզներում:

Որքան էլ հանճարեղ կոթողներ ստեղծուեն այսօր, մինչեւ մատաղ սերունդը հայեցի, քրիստոնէաբար չդաստիարակուի, ապագայ չենք ունենայ, այդքան թանկ գնով ձեռք բերուած մշակոյթը կրող չենք ունենայ: Տարիներ առաջ Սիւնիքում մէկն իր հողը մշակելիս յայտնաբերել էր թաքցրած գանձ, երբ դողդողալով բացել էր, պարզուել էր՝ մեծ գումար է, բայց... Նիկոլայ ցարի ժամանակի թղթադրամներով: Ահա նման մի բան տեղի կ'ունենայ մեր սերունդների հետ, եթէ այսպէս շարունակուի: Մատենադարանի և թանգարանների արժէքները անկիրթ սերնդի համար կը դառնան հնացած թղթադրամների պէս անհասկանալի և անգործածելի: Ռ. Թագորը «Մեկ դար անց» քերթուածում հարցնում է իր ապագայ ընթերցողին, թէ յաջողու՞ն է իրեն՝ բանաստեղծին, այսօրուայ արշալոյսի գէթ մէկ շողը՝ շաղախուած ծաղկանց բոյրով, հաւքերի երգով, յղել ընթերցողին: Արդեօք իր ձիրքը բաւարար էր այդ անելու:

Եթէ ուզում ենք, որ սրբալոյս միւռնի պէս դարերից եկող «ողջոյնը»՝ «գարունից գարուն, սրտից՝ սիրտ», հասնի գալիքին, պիտի սթափուենք, ձեռք բերենք հմտութիւն,



միաբանութիւն և, ամենակարեւորը, «չուտենք» ցանքի համար նախատեսուած սերմի վերջին պաշարները...

Անդին 8, 2014

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ժամանակ, ժամանակ....Ամենէն թանկագին բանը ամեն մահկանացուի կեանքին մէջ, մեզմէ իւրաքանչիւրին համար ալ....եւ շահ տ անգամ ժամանակ չենք գտներ իրարու համար....Ժամանակ չունիմ, կ'ըսենք ու կ'անցնինք...Բայց կարելի է, չէ, ժամանակ գտնել, ժամանակ ստեղծել, ժամանակ տրամադրել մեր սիրելիներուն...անոնց որ կարիքը ունին մեր ուշադրութեան, մեր ժամանակին....Իսկ շատ անգամ ալ

մեր թանկագին ժամանակը կը յատկացնենք սին ու փուն բաներու....կը մսխենք զայն...մինչդեռ կարելի էր զայն տրամադրել սիրտ մը ամոքելու, սիրտ մը մխիթարելու, սիրտ մը ուրախացնելու....

.....

Ինքզինք ըլլալ....երբ այնքան շատ են կեանքի մէջ զանազան դերեր խաղցողներ, դիմակով ներկայացողներ, «թուացեալ» իսկականի տեղ դնողներ....երբ ներկայ ընկերութիւնն ալ տեսակ մը կը հարկադրէ մարդ-անհատին իր դերակատարումը յաջողութեամբ խաղալ կեանքի մէջ, ըլլա՛յ որպէս պաշտօնեայ տուեալ ընկերութեան մը մէջ, ըլլա՛յ որպէս պետական գործիչ, իշխանաւոր....եւ այսպէս շարունակ: Եւ այնքան սակաւ են անոնք, որոնք հարազատ կը մնան իրենց բուն էութեան, հոգիին....այսպէս կորսնցնելով կեանքի մէջ ամենէն թանկը....

.....

Մարդ էակը՝ աննշա՛ն հիւլէ մը համայն տիեզերքին մէջ....բայց իր ոգիով կ'ըլլայ ան առնչակից, հաղորդակից նոյն այդ տիեզերքի, տիեզերական հզօրութեան հետ, տիեզերքի



անհունութեան հետ, եւ կը շատնայ, կ'ընդարձակի իր հոգին..., որ չի ճանչնար սահման ու պարագիծ, քանզի ան կը կրէ իր մէջ մասնիկ մը նոյն այդ տիեզերական անհունութենէն....

.....

Մեր փոքրիկ Ես-երը, մեր չնչին փառամոլութիւնները, մեր իշխելակիրքերը, մեր խմբակները, մեր խմբակայինը, մեր հաշիւները, մեր շահերը, մեր աթոռները....Ահա ասոնք են որ կործանարար են համայնքին, ազգին ու հայրենիքին....Պիտի կարենա՞նք ազատագրուիլ ասոնցմէ....վեր ելլել ասոնցմէ....Պիտի կարենա՞նք իսկապէս եւ ճշմարտօրէն մտածել հաւաքականին մասին, առանց սակայն ճգմելու անհատներու արժանապատուութիւնը....

.....

Յարմարողականութիւն... հայ հասարակութեան ախտերէն մէկը...Ծուղակ մը՝ ուր այնքան հեշտ ու դիւրին է իյնալ, յարմարիլ վերին իշխանութեանց եւ Եսթապլիշմենթին թելադրած ապրելակերպին, կարգ ու սարքին, արժէքներուն...Եւ արժանանալ անոնց գնահատանքին, պարգեւած շքանշաններուն, կերակրատաշտէն օգտուելու հնարաւորութեան....Բայց յարմարող ու համակերպող ամբոխէն վեր, միշտ ալ քայլած են սակաւաթիւ այն լուսափայլ մտաւորականները, որոնք մերժած են իրենց պարտադրուած նման ստրկամիտ վարքն ու բարքը....պայքարած են անոր դէմ բարձրաճակատ...Չեն վարանած բարձրաճայնելու ճշմարտութիւնը....լուսաւոր ուղենիշ դառնալով ապրող ու յետագայ սերունդներուն....Մարդ Էակին միշտ ալ տրուած է ընտրելու հնարաւորութիւնը....ապրիլ ստրկամտօրէն ու յարմարի, կամ ապրիլ ներքին ազատութեամբ, սեփական խիղճին ականջալուր...Թէեւ երկրորդին պարագային, ան բարձր գին պետք է վճարէ իր ընտրած ուղիին համար....

.....

Շատ հազուագիւտ անձեր գիտեն գնահատել ուրիշին բարի, ազգանուէր գործը, քաջալերել զայն, արժէւորել ի գործ դրուած հոգեւոր աշխատանքը, զոհողութիւնը....յետոյ ալ բարձրագոյն եւ բարձրադադակ կը խօսին, կը բարբառեն ազնւութեան մասին...ազգասիրութեան մասին, հայրենասիրութեան մասին...Ահա թէ ինչու հայ կեանքը կը հեւայ, կը հեւայ, կը հեւայ....շնչասպառ....

.....

Ոչ մէկ բան պիտի մոլութեան վերածել, կ'ըսէ ողջմտութեան ձայնը, այլ ամէն ինչ չափի մէջ է գեղեցիկ, եւ սա ճիշդ է գրեթէ բոլոր պարագաներուն համար ալ...Բայց հոս եւս կան բացառութիւններ....Սիրոյ ծայրայեղ պոռթկումէն կը ծնին ամէնէն վեհանձն եւ անձնագոհ արարքները....Զաջութեան եւ արիւթեան ամէն չափ գլոյ-անցնող դրսեւորումներն են որ տուն կու տան հերոսական սխրագործութեանց....Աշխատասիրութեան մոլուցքն է որ շատ անգամ պատճառ է դարձած որ հանճարը փայլատակի....Եւ այսպէս կարելի է շարունակել «չափազանցութեանց» նպաստը ազգին ու մարդկութեան....Ողջմտութիւնը յաճախ միջակութեանց ապաստանն է....

.....

Սերն է որ թափ կու տայ մտքին, հուր կու տայ սրտին, ոյժ կու տայ կամքին...Տիեզերքի չորս ծագէն՝ նոր-նոր միտքեր կ'այցելեն, նոր-նոր ոգի կը յառնէ, երբ կա՛յ սերը, անոր լո՛յսը, անոր



շոյանքը, անոր վսեմական եւ վսեմացնող թռիչքը....Սերը ներշնչող է, ոգեշնչող ու վեհացնող է...տիեզերական շո՛ւնչ է....Սերը Աստուած է...

.....

Մարդիկ կան որոնց հոգին կարծես կը ճառագայթէ անոնց աչքերուն մէջ ու դեմքին վրայ, անոնց հոգին կը կարդացուի անոնց արտաբերած խօսքին մէջ, ցոլացող ժպիտին մէջ....Նմանները համակ հոգի են, լոյսի շող ու ճաճանչ....եւ որքան հազուադէպ են անոնք....

.....

Առանձնութեան մէջ, ամէնուն հետ եմ, ամէնուն ցաւն ու տառապանքը իմն ալ են, ամէնուն խիղիւն ու ծիծաղը՝ իմը....Առանձնութեան մէջ ալ ես անքակտելի մասնիկն եմ ամբողջին, յոյգերս, մտորումներս, խռովքներս ու տագնապներս շատ անգամ կ'անդրանցնին անձնականը եւ կ'ընդգրկեն հայութեան, հայրենիքի, մարդկութեան դիմագրաւած խնդիրները....Առանձնութեանս մէջ, ես Մենք-ի փոքրիկ հիւլէն եմ, անոր մէկ բջիջը....Մարդ եակը ի սկզբանէ ընկերային արարած է....ան կ'ապրի ու կը շնչէ անոր հարցերով, գիտակցաբար թէ անգիտակցաբար....Մարդ եակը չի կրնար միեակ ըլլալ....բայց կ'անկախան հոգեկան միակութեան պահեր, որոնք կարելոր են ինքնամփոփուելու, խորասուզուելու, խոկալու եւ արարելու համար....ի սեր համայնին ու մեզ....

.....

Արժեքներու խառնաշփոթը քառս կը ստեղծէ ամէնուրեք....Նիւթական-տնտեսական բարօրութեան անյագուրդ մարմաջը կլանած է ողջ հասարակութեան ուշադրութիւնը, ներուժը, համաշխարհային եւ ազգային մակարդակով ալ...: Տակաւ կը նահանջեն այն հոգեւոր-բարոյական-մշակութային արժեքները, որոնք դարեր շարունակ հիմքը եղած էին քաղաքակիրթ մարդկութեան երթին, զարգացման: Գեղեցկութեան, ազնուութեան, վեհանձնութեան եւ այլ արժեքներ եւ առաքիւնութիւններ տակաւ կը դադրին ինքնօրէն արժեքներ ըլլալէ եւ կը դատուին իրենց բերած կամ բերելիք Շահոյթով....Արթնացման, զգաստացման ժամը շատոնց հնչած է՝ երկիր մոլորակը փրկելու վերջնական աղէտէ...: Փոքր ժողովուրդ մը՝ հայութիւնը, կրնայ յառաջապահը ըլլալ մարդկութեան վերածնունդին, եթէ կարենայ իր ստեղծած հոգեւոր-մշակութային արժեքներու համակարգով Նոր կեանք ու ապրելակերպ ստեղծել եւ բարի օրինակ դառնալ հոգեսպառ մարդկութեան....

.....

Իրաւունքի ոյժը եւ ոյժի իրաւունքը... Արժանապատուութիւն է պայքարիլ յանուն իրաւունքի ոյժի հաստատման...իսկ ստրկամտութիւն է կամակատարը ըլլալ ոյժի իրաւունքին...

.....

Ըսե՛լ դառն ճշմարտութիւնը եւ գէշ մա՛րդ ըլլալ, թե՛ լռել եւ լաւ մարդ ըլլալ....Շատեր կ'ապրին այս երկուութիւնը եւ շատ-շատեր կը լռեն, ըսելով. «Ինչո՞ւ գէշ պիտի ըլլամ»: Սակաւ են անոնք, որոնք ամէն գնով կը բարձրաձայնեն ճշմարտութիւնը, քանզի նմաններուն համար ճշմարտութիւնը ամէն բանէ վեր է...Ճշմարտութիւն՝ ճշմարտութեան սիրոյն, առանց այլեւայլ հաշիւներու, նկատառումներու....:



.....

Հայ կեանքին մէջ, ընդհանրապէս, տարբեր կարծիք ունեցողներ կը բաժնուին հակադիր ճակատներու, եւ այնպիսի մոլեգին հակառակութեամբ կը պայքարին իրարու դէմ, որ կարծեք թշնամիներ ըլլային, մոռացութեան տալով մեզ իրարու միացնող հիմնական տարրերը՝ լեզու, պատմութիւն, մշակոյթ ու պատմական ճակատագիր...: Սա եւս արդեօք մեր լայնախոհութեան պակասի եւ գաւառամտութեան արդիւնքը չէ...

.....

Մեր մեծասքանչ լեզուին՝ հայերէնին մէջ եւս արտացոլուած ազգային մեր հոգեբանութիւնն ու մտածելակերպը, ազգային նկարագիրն ու ինքնութիւնը....Անիկա ե՛ւ պատմութիւն է, ե՛ւ մշակոյթ...հայ հոգիին ու ոգիին մարմնացումը: Առանց հայոց լեզուին, մենք որոշապէս կը մեռնինք որպէս ազգային ինքնութիւն դիմագիծ ունեցող ժողովուրդ եւ կը դառնանք անդէմ, անդիմագիծ զանգուած....Ի զուր չէ ըսուած. «Լեզուն ազգի մը հոգին է. Կենդանի է այդ հոգին, կենդանի է եւ ազգը, կը մեռնի լեզուն, կը մեռնի եւ ազգը...»...Պիտի պահենք-պահպանենք եւ առաւել պայծառացնենք զայն...քանզի առանց հայոց լեզուի կենսունակ պահպանման, չի կրնար ըլլալ ազգային պետականութիւն: ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Մեծ մարդերու անչափ սով կայ
Որոնք որպէս լոյսի ճաճանչ
Ճառագայթեն աշխարհն պատող
Մշուշին մէջ մոլորեցնող..

.....

Շուրջդ բոլոր՝ զօրաւորին

Խնկարկեցին կոյր ու հլու

Դուն միայնակ ճշմարիտին

Եղար հպարտ սպասարկու..

.....

Ձեւ էր, ցոյց էր, խորք մը չկար

Չգեստի տակ մարմին չկար

Մարմինին մէջ հոգի չկար



Խամաճիկ մըն էր սարքուած...

.....

Տօթակէզ օր է, հրաշէկ լաւա է
Երկնէն կը թափի, աշխարհ պարուրէ
Բառերս նոյնպէս հուր ու կրակ են
Գուցէ ջերմացնեն սիրտերը սառցէ...

.....

Սիրտս կարծես վարդ մը ըլլար
Իր թերթերով բազմաբուրեան
Թերթ առ թերթ ես բացի գայն
Անխտորօրէն ու շռայլաբար...

.....

Թէ որ հոգիդ մրուրապատ
Փորձես ծածկել փայլով ոսկեայ
Ուշ թէ կանուխ ի յայտ պիտ' գայ
Սեւ մրուրովն իր մէջ թաքնուած...

.....

Յաւը ինչպէ՞ս կրնաս մոռնալ
Յուշարարը ան կը դառնայ
Այրած սրտիդ որ հաւատաց
Եւ խաբուեցաւ ան չարաչար...

.....

Գոհար սիրտը ես սիրեցի
Գոհար քարէն ալ թանկագին
Չայն փնտռեցի ես շարունակ
Որպէս անգին գանձ ոգեկան..

.....

Ուրախ պահեր՝ որքան ուզես



Անցան, գացին հետք չթողած

Տառապանքս լոկ ինձ մնաց

Որպէս փուշ մը սրտիս խրած...

.....

Կեղծն անկեղծին դիմաց կանգնած

Իր ծուռ դէմքին ցոլքը տեսաւ

Փախուստ ուզեց տալ ծակէ-ծակ

Դիմակն ինկաւ, փշրուեցաւ..

.....

Թէկուզ համայն աշխարհն ման գաս

Հրաշալիքներ տեսնես հազար

Սրտիդ մէջ լոկ ամբարածդ

Կը մնայ յար ճշմարիտ գանձ...

.....

Լոյսն տեսնելէ ետք, ինչպէ՞ս կոյր մնալ

Շարունակել դեռ խարխափել անվերջ

Պատէ-պատ զարնուիլ, ճամբան չգտնել

Կամովին կոյրին՝ չէ՛ ներում չկայ..

.....

Մարդիկ անմար խանդ մը ունին

Երբ ազատ ես մտքիդ թռիչքով

Չես հպատակիր դիրքին, դրամին

Ուժեղ, անկախ ես ոգիով...

.....

Մարդիկ չեն ներեր երբ շիփ շիտակ ես

Չես քծնիր, ծռիր ուժեղ կարծածին

Ճշմարիտը լոկ կ'ըսես ու կ'անցնիս

Անով կը զգաս դուն հպարտ ու զօրեղ...



.....

Գեղեցիկով պիտի հիանալ

Հոգիով, սրտով պիտի լիանալ

Թէ շահ, օգուտ քաղես անկէ

Կը դադրի քեզ հմայելէ...

.....

Կեանքիս գարնան, ամպերու մէջ

Հոգիս թեւեց երկնաթափառ

Կեանքիս աշունն զիս ցոյց տուաւ

Անդունդը խոր ծալ-ծալ բացուած...

.....

Հոգիները թէ որ սիրեն

Միշտ միասին կը գրուցեն

Չկայ միջոց ու ժամանակ

Չիրենք դարձնէ տարանջատ...

.....

Հոգիս տիեզերք մըն է անհուն

Իր վիհերով, խորխորատով

Բարձունքներով իր արեւոտ

Մերթ վեր, մերթ վար ճախրեմ ցնծուն...

.....

Վերիվայրում մըն է կեանքը

Այսօր վերն ես՝ լոյս գազաթը

Վաղը կրնաս ըլլալ վարը

Մարդ մնալն է կարեւորը..

.....

Սրտաբուխ խօսքը սահման չի ճանչնար

Խենթութիւն ունի ան իր բառին մէջ



Չափուած-ծելուածը հաշուենկատ է

Սրտին չի դաչիր, չունի ան հմայք...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ